

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ

**2-32.12.01 «ԶԱՐԴԱԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԹԱՆԿԱՐԺԷՔ ԻՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ**

2-32.12.01.01-3 «ՈՍԿԵՐԻՉ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ԵՐԵՎԱՆ 2014

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ ՏՆՕՐԵՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԻՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՆՎՈՒՄՆԵՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

2-32.12.01.01-3 << ՈՍԿԵՐԻՉ >>

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ՄԱՍՆԱԳԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ << ԶԱՐԴԱԿԻՐԱՌԱԿԱՆ

ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԹԱՆԿԱՐԺԲԻ ԻՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ >>

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԱԿԱՆ
(ԱՐՇԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ)

ՄԱՍՆԱԳԵՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ՝ «ՈՍԿԵՐԻՉ»

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ՝ միջնակարգ կրթության հիմքով

ՈՒՍՈՒՄՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 1 տարի

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ՝ առկա

< > _____ 20 __ թ.

I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑԸ

Կուրս	սեպտեմբեր				հոկտեմ			նոյեմբեր			դեկտեմբեր			հունվ.			փետրվ.			մարտ			ապրիլ			մայիս			հունիս			հուլիս			օգոստոս			II. Ժամանակի բյուջեն /շաբաթներով/																																																																												
	1	7	8	14	15	21	22	28	29.09	5.10	6	12	13	19	20	26	27.10	2.11	3	9	10	16	17	23	24	30	1	7	8	14	15	21	22	28	29.12	4.01	5	11	12	18	19	25	26.01	1.02	2	8	9	15	16	22	23	29	30.03	5.04	6	12	13	19	20	26	27.04	3.05	4	10	11	17	18	24	25	31	1	7	8	14	15	21	22	28	29.06	5.07	6	12	13	19	20	26	27.07	2.08	3	9	10	16	17	23	24	31	II. Ժամանակի բյուջեն /շաբաթներով/																	
1																																																																					27	1	11	1	1	11	52																											27	1	11	1	1	11	52						



Տեսական
ուսուցում



Ուսումնական
պրակտիկա
տեսական
ուսուցմամբ



Ուսումնական
պրակտիկա
առանց տեսական
ուսուցման



Նախաավարտական,
արտադրական
պրակտիկա



Մոդուլների
ամփոփում



Նախապատրաստում
ամփոփիչ պետական
ատեստավորման



Ամփոփիչ
պետական
ատեստավորում



Արձակուրդ,
ամառի և
սուրբ ծնունդ

II. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Առեստավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)				Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների					
		Քնն.	Ստուգարք	Կուրս աշխ.	Պարտադիր լսարանային բեռնվածություն				1- ին կուրս		2-րդ կուրս		3-րդ կուրս	
					Ընդամենը	Այլ թվում			1-ին կիս.	2-րդ կիս.	3-րդ կիս.	4-րդ կիս.	5-րդ կիս.	6-րդ կիս.
						Տես. ուսուց.	Լաբոր. և գործն. աշխ	Սեմինար պարապմունք	2աբ	2աբ.	2աբ.	2աբ.	17	10
						2աբ.	2աբ.	2աբ.	2աբ.	2աբ.	2աբ.			
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ													
1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		5,6տ		72	54	18						36	36
2	Ֆիզիկական կուլտուրա		5,6տ		54		54						30	24
3	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		5տ		18	14		4					18	
4	Իրավունքի հիմունքներ		6տ		36	26	6	4						36
5	Պատմություն		5տ		36	28		8					36	
6	Օտար լեզու		5,6տ		60	42	18						36	24
7	Լանդշաֆտագիտության և էկոլոգիայի հիմունքներ		5տ		36	30	6						36	
8	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		5տ		18	18							18	
	ԸՆԴԱՄԵՆԸ				330	212	102	16					210	120
2.	ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ													
1	Հաղորդակցություն		5տ		36	8	28						36	
2	Անվտանգություն և առաջին օգնություն		5տ		36	12	24						36	
3	Համակարգչային օպերատրություն		5տ		54	12	42						54	

	ԸՆԴԱՄԵՆԸ				126	32	94						126	
3.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ													
1	Մասնագիտության ներածություն և նյութագիտություն		5տ		18	12	6						18	
2	Գծագրություն եվ եռաչափ կառուցումներ		5.6տ		48	8	40						18	30
3	Էսքիզ, գծանկար եվ գունանկար		5.6տ		48	12	36						12	36
4	Ոսկերչական իրի համար նախատեսված համաձուլվածքի պատրաստում		5տ		24	6	18						24	
5	Ոսկերչական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ: նախապատրաստուկների ստացում գլոցման և լարածգման եղանակով		5տ		24	6	18						24	
6	Ոսկերչական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ: նախապատրաստուկների և մանրակների պատրաստում փականագործական աշխատանքների եղանակով		5.6տ		48	14	34						36	12
7	Ոսկերչական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ: մանրակների պատրաստում դրոշմման եղանակով		5տ		18	6	12						18	
8	Ոսկերչական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ՝ մանրակների պատրաստում ոսկերչական մոմի փորագրման եղանակով		5տ		36	12	24						36	
9	Ոսկերչական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ: մանրակների պատրաստում ձուլման եղանակով		5տ		36	12	24						36	
10	Ոսկերչական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ: մանրակների պատրաստում հյուսվածքային տեխնիկայի (ֆիլիգրան) եղանակով		5.6տ		36	8	28						18	18

	ԸՆԴԱՄԵՆԸ			336	96	240					240	96
4.	ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ											
1	Շինվածքի հավաքում		5.6տ	36	8	28					24	12
2	Ոսկերչական իրի ընթացիկ մշակում		5տ	24	6	18						24
3	Ոսկերչական իրի վերջնական մշակում եվ նախշազարդում, աշխատատեղի մաքրում, գործիքների դասավորում, կատարված աշխատանքի հանձնում		6տ	24	6	18						24
4	Ոսկերչական քարերի տեղադրում		6տ	24	6	18						24
5	Նորոգման աշխատանքներ		5տ	24	6	18						24
	ԸՆԴԱՄԵՆԸ			132	32	100					24	108
5.	ԸՆՏՐՈՎԻ		6տ	36								36
	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ		5տ	12							12	
	ԸՆԴԱՄԵՆԸ			972	372	536	16				612	360
	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ		6տ	100								100
	Շաբաթվա ժամերի քանակը			36							36	36

	IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ			N	VII. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱՐՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ
1	Ընտանեկան կյանքի նախապատրաստում				ԿԱԲԻՆԵՏՆԵՐ
2	Տարիքային հոգեբանություն			1	Մասնագիտական տեխնոլոգիայի և նյութաբանության,
				2	Նկարչության, կոմպոզիցիայի և տեխնիկական գծագրության,
				3	Քանդակագործության,
				4	Անհատական համակարգիչների,
	V. ՊՐԱԿՏԻԿԱ	Կիս ամյ	Շաբաթ	5	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների,

		ակ						
1	Շինվածքի հավաքում	6	2	6	Օտար լեզվի			
2	Ոսկերչական իրի ընթացիկ մշակում	6	2	7	Աշխատանքի անվտանգության			
3	Ոսկերչական իրի վերջնական մշակում եվ նախշազարդում, աշխատատեղի մաքրում, գործիքների դասավորում, կատարված աշխատանքի հանձնում	6	2	8	Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաների			
4	Մասնագիտական պրակտիկա	6	5	9	Մասնագիտական տեխնոլոգիայի և նյութաբանության			
	ԸՆԴԱՄԵՆԸ		11		ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ			
VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ Համալիր քննություն ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլներից /հունիսի 29-ից հուլիսի 5-ը/					Քիմիայի			
				2	Ֆիզիկայի			
								ԱՐՇԵՍԱՆՈՑՆԵՐ
				1	Ընդհանուր ոսկերչական			
				2	Զուլման և մաքրման			
								ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
				1	Մարզադահլիճ			
				2	Մարզահրապարակ			

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, հաստատության ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների /մոդուլների/ ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների /մոդուլների/ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի, ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների /մոդուլների/ գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է հաստատության խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը, բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է հաստատությունը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է հաստատության ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը: Ամանորի և Սուրբ ծննդի տոների շաբաթը հաստատությունը հաշվի է առնում յուրաքանչյուր տարվա աշխատանքային ժամանակացույցը կազմելիս:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է հաստատությունը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ>>

Մոդուլի դասիչը	ԱՀ-Հ-3-14-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը
Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 28 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար, 2) կիրառի ուղղակի հաղորդակցման ձևերը, 3) կիրառի անուղղակի հաղորդակցման ձևերը, 4) ձևավորի և զարգացնի միջանձնային հաղորդակցում, 5) խթանի համագործակցության ձևավորումը, ստեղծի նախապայմաններ շարունական գործընկերության համար:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար,

	<p>2) ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները,</p> <p>3) ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները,</p> <p>4) շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը,</p> <p>5) անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով:</p> <p>Ուսանողին կտրվեն հարցեր անձնական հաղորդակցման և շփման ձևերի, գործնական հաղորդակցման եղանակների ու դրանց բաղադրիչների վերաբերյալ: Կառաջադրվեն իրավիճակային խնդիրներ՝ նպատակային հաղորդակցման հնարավորությունները բացահայտելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և առաջադրված իրավիճակում օգտագործում է հնարավորությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը,</p> <p>2) բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին,</p> <p>3) հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք,</p> <p>4) ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է,</p> <p>5) մասնակցում է քննարկումների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:</p>

<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր ուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, հանձնարարվում է որոշակի թեմայի շուրջ զեկույց և հաղորդում պատրաստել, առաջադրվում է թեմատիկ քննարկումներ, որի ընթացքում ուսանողը հանդես է գալիս հնարավոր բոլոր դրսևորումներով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, խոսքը կառուցում է հստակ և նպատակային, կարողանում է արծագանքել ըստ իրավիճակի:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 3</p>	<p>Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը, 2) կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան, 3) օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար, 4) կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի, 5) վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր, 6) բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի, 7) գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:

<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, կհանձնարարվի որոշակի թեմայի շուրջ կազմել տեքստ՝ հաշվի առնելով հասցեատիրոջը, կառաջադրվի թեմա, որի վերաբերյալ տարբեր աղբյուրներից հավաքագրվում, ամբողջացվում և փոխանցվում է տեղեկատվությունը, կհանձնարվի բանավոր հակիրճ միտքը վերածել գրավոր ամբողջական տեքստի, իսկ ամբողջական ծավալուն տեքստից առանձնացնել առաջնային ինֆորմացիան և ներկայացնել հակիրճ խոսքով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և 80% ճշգրտությամբ կատարում է հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 4</p>	<p>Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ հասցեատիրոջ, 2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը, 3) առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար, 4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, 5) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ,

	<p>6) պահպանում և եզրափակում է երկխոսությունը,</p> <p>7) կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով:</p> <p>Ուսանողին կհանձնարարվի գործնական աշխատանքներ որոշակի տեղեկատվություն ստանալու, մշակելու և դասակարգելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ անձնական շփում նախաձեռնելու, երկխոսության կողմ լինելու, զրույցը պահպանելու և եզրափակելու կարողությունները դիտարկելու, գնահատելու համար: Նույն առաջադրանքը կհանձնարարվի աշխատանքային շփումների համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 5	<p>Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն), 2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքում է անհրաժեշտ տեղեկատվություն, 3) հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար, 4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,

	<p>5) հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն,</p> <p>6) ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով:</p> <p>Թեստերի միջոցով ստուգվում է համագործակցությունը խթանող միջոցառումների իմացությունը, և կոնկրետ դեպքերի համար դրանց կիրառման առավել նպաստավոր տարբերակները: Կհանձնարարվի հավաքագրել որոշակի գործընկերոջ վերաբերյալ տեղեկատվություն և օգտագործել գործարար հաղորդակցում ձևավորելու համար:</p> <p>Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ գործնական հաղորդակցում նախաձեռնելու, համագործակցության հասնելու և հետադարձ կապ ապահովելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ>>	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԱՕ-3-14-001
Մոդուլի նպատակը	<p>Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ</p>

Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից տեսական ուսուցում 12 ժամ գործնական աշխատանք 24 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները, 2) կազմակերպի կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան, 3) կանխի հավանական վտանգները և վթարները, իրականացնի անվտանգության միջոցառումներ, 4) ցուցաբերի առաջին օգնություն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը, 2) ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները, 3) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, 4) ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, 5) ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները, 6) ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեստային առաջադրանքի հիման վրա: Ուսանողին կհանձնարարվի առնվազն 10 առաջադրանքով թեստ, որում նա պետք է ընտրի տվյալ իրավիճակի ճիշտ պատասխանը: Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝

	<p>անվտանգության հիմնական կանոնները՝ ըստ տարբեր մասնագիտական աշխատատեղերի, տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը,</p> <p>հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը,</p> <p>էլեկտրաանվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը:</p> <p>կենցաղային հիմնական սարքերի անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը առաջադրանքը կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	<p>Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական), 2) ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն), 3) ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը, 4) ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել որոշակի, կոնկրետ իրավիճակից բխող սանիտարիայի և հիգիենայի պահպանման, ինչպես նաև</p>

	անհրաժեշտ աշխատանքային կամ կենցաղային նյութերի անվնաս օգտագործմանն ուղղված միջոցառումներ: Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները, 2) ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները, 3) ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները, 4) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառների ու հետևանքների, դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի խմբերի համար սահմանված աշխատանքային պայմանների ապահովման և կոնկրետ վտանգի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: Կառաջադրվի կոնկրետ կենցաղային վթարի կամ պատահարի համար ներկայացնել փաստաթղթային ձևակերպումներ բաղադրիչները: Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ցուցաբերել առաջին օգնություն
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին, 2) առաջին օգնության գործողությունների քայլերը ճիշտ է ներկայացնում, 3) կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն, 4) կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն, 5) կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ, 6) տարբեր կտրվածքների դեպքում կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն, 7) ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության գործողությունները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի կատարել (անհնարինության դեպքում՝ նկարագրել) առաջին օգնության գործողություններ՝ ըստ դեպքերի: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է կատարում բոլոր հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ, առաջին օգնության համար անհրաժեշտ միջոցներ, նյութեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕԴԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ>>	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ՀՕ-3-14-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի, գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները
Մոդուլի տևողությունը	54 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 42 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) կիրառի համակարգչային համալիրում ներառվող բաղադրիչները և օպերացիոն համակարգը, 2) խմբագրի և ֆորմատավորի տեքստեր, 3) պատրաստի և խմբագրի աղյուսակներ, 4) կատարի գրաֆիկական խմբագրում և նկարազարդում, 5) համակարգչային ծրագրերով կազմակերպի ցուցադրություն, 6) աշխատի համացանցում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Ուսումնառության արդյունք 1	Կիրառել համակարգչային համալիրում ներառվող բաղադրիչները և օպերացիոն համակարգը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) համակարգչային համալիրում ներառվող հիմնական և լրացուցիչ բաղադրիչները բնութագրում է, 2) ճիշտ է պահպանում համակարգիչը և բաղադրիչները միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմանները, 3) օգտվում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերից, 4) ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը, 5) ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը, 6) բացում է առաջադրված թղթապանակը և ֆայլը, 7) օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից, 8) ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ, պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում, 9) կատարում է փաստաթղթի տպագրում:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչների, օժանդակ տեխնիկական սարքերի, դրանց կիրառման և նշանակության մասին: Կհանձնարարվի միացնել համակարգիչը և դրան կից օժանդակ տեխնիկական սարքերը, օգտագործել ծրագրային հնարավորությունները՝ համաձայն առաջադրանքի: Ուսանողին կառաջադրվեն առնվազն 3 հիմնական ծրագրում կատարել նույն գործողությունը. թղթապանակ և ֆայլ բացելու, պատուհանային մենյուի հիմնական հրամաններից օգտվելու, ստեղծված ֆայլը պահպանելու, փակելու, առաջադրված վայրում տեղադրելու և տպագրելու գործողություն:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր, համակարգչային օժանդակ

	տեխնիկական սարքեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Խմբագրել և ֆորմատավորել տեքստեր
Կատարման չափանիշներ	1) հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար ծրագրերը պատրաստել է, 2) մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ, 3) տեքստային ցուցիչը տեղաշարժելով կատարելում է ուղղումներ, ջնջումներ, լրացումներ, փոփոխություններ, 4) մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորման գործողությունները ճիշտ է կատարում, 5) կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անհմացիաներ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի տեքստեր մուտքագրելու, ձևավորելու, խմբագրելու տեքստը հավելելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Պատրաստել և խմբագրել աղյուսակներ
Կատարման չափանիշներ	1) աղյուսակներ կազմելու համակարգչային ծրագրերը և դրանց կիրառումը ներկայացնում է, 2) առաջադրված չափերով կազմում է աղյուսակ և մուտքագրում տվյալներ,

	<p>3) աղյուսակում կատարում է ուղղումներ, լրացումներ, փոփոխություններ,</p> <p>4) աղյուսակի տվյալների մեջ ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի աղյուսակ կազմելու, ձևավորելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, աղյուսակային տվյալները հավելելու և տվյալների ֆունկցիոնալ կախվածություն ստեղծելու գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: Ֆունկցիոնալ կախվածության օրինակ կարող է հանդիսանալ թվաբանական գործողությունների ամփոփումը, վերափոխումը (օրինակ՝ տոկոսի վերածելը) և այլն:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	<p>Կատարել գրաֆիկական խմբագրում և նկարազարդում</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով նաև Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը, 2) գծագրում է կանոնավոր պատկերներ, 3) ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով, 4) խմբավորում է գրաֆիկական օբյեկտները, 5) գծագրում է տեքստային բլոկներ, 6) կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին</p>

	<p>կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի գրաֆիկական օբյեկտներ, կանոնավոր պատկերներ, տեքստային բլոկներ գծագրելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, խմբավորելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 5	<p>Համակարգչային ծրագրերով կազմակերպել ցուցադրություն</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը ճիշտ է ներկայացնում, 2) մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ, 3) ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով, 4) կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար, 5) ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի օգտվելով պատուհանային կառուցվածքից նախապատրաստել ցուցադրական ծրագիրը՝ թվային և տեքստային տվյալներ մուտքագրելու, խմբագրելու, նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, աղյուսակային և գրաֆիկական տվյալներ ներբեռնելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:</p> <p>Կառաջադրվի ազատ թեմայի ներկայացման համար պատրաստել ցուցադրություն և ներկայացնել՝ պահպանելով թեմայի տրամաբանական կապն ու հաջորդականությունը:</p>

	Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Աշխատել համացանցում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է «համացանց» հասկացությունը, 2) օգտագործում է ինտերնետային հիմնական ծրագրերը, 3) ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը, 4) փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից), 5) կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները, 6) գրանցվում է էլեկտրոնային փոստում, ինտերնետային ծրագրերում և այլ կայքերում, 7) օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում ինֆորմացիա:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել համացանցի կառուցվածք, օգտագործման նպատակների բազմազանությունը, համացանցի միջոցով կարգավորման ենթա հնարավոր հարցերը: Ուսանողին կհանձնարարվի մուտք գործել ինտերնետային ծրագիր՝ փնտրել առաջադրված տվյալները, ներբեռնել, օգտագործել և պահպանել տվյալներ: Կառաջադրվի որոշակի տեղեկատվություն փոխանցել սոցիալական կայքերի միջոցով կամ բաշխել ըստ հասցեականության:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ>>	
Մոդուլի դասիչը	ՈՍԿ 3-14-001
Մոդուլի նպատակը	Ուսանողը պետք է կարողանա ներկայացնել ոսկերչական արվեստը, դրա դերն ու նշանակությունը, զարգացման պատմությունը, ուսանողի մոտ ձևավորել կարողություններ ոսկերչական արհեստանոցում օգտագործվող հիմնական գործիքների, հարմարանքների ու սարքավորումների, դրանց դերի և նշանակության, ոսկերչությունում օգտագործվող թանկարժեք մետաղների հատկությունների վերաբերյալ:
Մոդուլի տևողությունը	18 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Մուտքային պահանջները	Մոդուլն ուսումնասիրելու համար նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) Կարողանալ ներկայացնել հայրենական և համաշխարհային ոսկերչության զարգացման պատմությունը 2) Ներկայացնել ոսկերչական արհեստանոցում օգտագործվող հիմնական գործիքները, հարմարանքներն ու սարքավորումները և իմանալ դրանց նշանակությունը 3) Ներկայացնել ոսկերչությունում օգտագործվող թանկարժեք մետաղների մեխանիկական և ֆիզիկական հատկությունները, թանկարժեք մետաղների հարգերը << ում և արտերկրում ու դրանց թույլատրելի շեղումները
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Ուսումնառության արդյունք 1	Կարողանալ ներկայացնել հայրենական և համաշխարհային ոսկերչության զարգացման պատմությունը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ոսկերչական արվեստի դերն ու նշանակությունը, 2) ճիշտ է ներկայացնում հայրենական ու համաշխարհային ոսկերչության զարգացման պատմությունը, 3) տեղյակ է հայտնի ոսկերչական կոթողներին և դրանց ստեղծման պատմությանը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվում է բանավոր հարց ու պատասխանի միջոցով, որի ընթացքում շոշափվում են ոսկերչական արվեստի դերն ու նշանակությունը ,հայրենական ու համաշխարհային ոսկերչության զարգացման հիմնական հարցերը: Արդյունքի յուրացումը բավարար է գնահատվում, եթե առաջադրված հարցերին պատասխանելիս ուսանողը ցուցաբերում է տեղեկացվածություն, կարողանում է գրագետ շարադրել պատասխանները: Առանձին բացթողումները կամ վրիպակները չեն կարող ազդել գնահատման վրա:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, ցուցադրական նյութեր, ոսկերչական կոթողների պատկերներ, մասնագիտական գրքեր ըստ դարաշրջանների և երկրների , ոսկերչական արվեստի և պատմության գրքեր, նյութեր, նկարներ և այլն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ոսկերչական արհեստանոցում օգտագործվող հիմնական գործիքները, հարմարանքներն ու սարքավորումները և իմանալ դրանց նշանակությունը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճանաչում և անվանում է ոսկերչական արհեստանոցում օգտագործվող հիմնական գործիքները, սարքավորումներն ու հարմարանքները, 2) ճիշտ է ներկայացնում յուրաքանչյուր գործիքի, սարքավորման և հարմարանքի նշանակությունը, կիրառման ոլորտը, 3) ցույց է տալիս համապատասխան գործիքների ու սարքավորումների օգտագործման ձևը՝ պահպանելով աշխատանքի անվտանգության կանոնները:

Գնահատման միջոցը

Արդյունքի յուրացումը գնահատվելու է բանավոր հարց ու պատասխանի, թեսթային հանձնարարության և գործնական կատարման հիման վրա: Թեսթի միջոցով ստուգվելու է, թե ուսանողը ինչպես է պատկերացնում գործիքների կիրառման տեղը ըստ ֆունկցիայի, իսկ գործնական կատարման միջոցով՝ նա ցույց է տալու յուրաքանչյուր գործիքի, հարմարանքի և սարքավորման օգտագործման ձևը՝ պահպանելով աշխատանքի անվտանգության կանոնները:

Ստորև ներկայացվում է ոսկերչության մեջ օգտագործվող հիմնական գործիքները, սարքավորումները և հարմարանքները.

- ոսկերչական սեղան
- ոսկերչական կշեռք,
- գլոցման հաստոց,
- դրոշմման մամլիչ
- լարածգման կորզան /ֆիլլեր/
- փայլեցնող հաստոց
- ձուլման մեքենա
- մուֆելային վառարան
- կաղապարման սարք
- մոմերի սրսկման սարք
- անհատական օգտագործման գործիքներ և հարմարանքներ
- հատման, կտրման, ռանդման աշխատանքների գործիքներ
- հալեցման և զոդման հարմարանքներ
- բոր մեքենա

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե հարցերի և թեսթի պատասխանները ընդհանուր առմամբ հիմնականում ճիշտ են, իսկ գործիքների, հարմարանքների և սարքավորումների օգտագործման ձևը ճիշտ է

	ցուցադրվում՝ պահպանելով աշխատանքի անվտանգության կանոնները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան հաստողներ, վառարաններ, գործիքներ, հարմարանքներ և սարքավորումներ, ցուցադրական նյութեր՝ դրանց օգտագործման ձևերի վերաբերյալ՝ ըստ բնագավառի: Ուսուցման գործնական մասը պետք է անցկացնել արհեստանոցային պայմաններում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ոսկերչությունում օգտագործվող թանկարժեք մետաղների մեխանիկական և ֆիզիկական հատկությունները, թանկարժեք մետաղների հարգերը ՀՀ ում և արտերկրում ու դրանց թույլատրելի շեղումները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում թանկարժեք մետաղների կիրառման ոլորտները, նշանակությունը, 2) ճիշտ է ներկայացնում թանկարժեք մետաղների գույնը, տեսակարար կշիռը, հալման ջերմաստիճանը, ամրության, կարծրության, պլաստիկության ցուցանիշները, 3) տեղյակ է ՀՀ ում օգտագործվող թանկարժեք մետաղների հարգերին, դրանց թույլատրելի շեղումներին 4) տեղյակ է արտերկրում թանկարժեք մետաղների հարգերի միջազգային սանդարտներին:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և թեստային հանձնարարություն կատարելու հիման վրա: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվելու է թանկարժեք մետաղների կիրառման ոլորտների, նշանակության ընդհանուր գիտելիքները, նրա տեղեկացվածությունը ՀՀ ում և արտերկրում թանկարժեք մետաղների հարգերին, թույլատրելի շեղումներին: Թեստային հանձնարարությունով ուսանողին հանձնարարվելու է ըստ թանկարժեք մետաղների տեսակի լրացնել դրանց գույնը, տեսակարար կշիռը, հալման ջերմաստիճանը, ամրության, կարծրության, պլաստիկության ցուցանիշները: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. - Ոսկերչությունում օգտագործվող թանկարժեք մետաղների՝ ոսկու , արծաթի, պլատինի , պալադիումի, իրիդիումի,

	<p>դրանց ֆիզիկական և մեխանիկական հատկությունների ներկայացումը,</p> <ul style="list-style-type: none"> - ՀՀ –ում ընդունված ստանդարտ հարգերի ներկայացումը ոսկու, արծաթի, պալադիումի և պլատինի համար, - արտասահմանում ընդունված ստանդարտ հարգերի ներկայացումը ոսկու, արծաթի, պալադիումի և պլատինի համար: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ պատասխան է տալիս, իսկ թեստային առաջադրանքը կատարում է առնվազն 85 տոկոս ճշտությամբ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ են ուսումնական և ցուցադրական նյութեր, մասնագիտական գրքեր, պլակատներ և աղյուսակներ ,ուսուցման տեխնիկական միջոցներ, ՀՀ և արտասահմանյան հարգերի տեղեկատուներ: Ուսուցումը նպատակահարմար է իրականացնել կաբինետային պայմաններում:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ԳԾԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՌԱԶԱՓ ԿԱՌՈՒՑՈՒՄՆԵՐ>>	
Մոդուլի դասիչը	ՈՍԿ 3-14-002
Մոդուլի նպատակը	<p>Ուսանողը պետք է կարողանա ներկայացնել գծագրության կանոնները, այնտեղ օգտագործվող տեխնիկական նշանակումները, սիմվոլները, ունենա կարողություններ պատկերների հարթ և տարածական պատկերման հմտությունների, չափերի, լծորդումների, բաժանումների, պարզագույն երկրաչափական մարմինների հարթ և տարածական կառուցման մասին:</p>
Մոդուլի տևողությունը	<p>48 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 40 ժամ</p>
Մուտքային պահանջները	Մոդուլն ուսումնասիրելու համար նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ:

Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա՝</p> <ol style="list-style-type: none"> 1) Ներկայացնել գծագրողի աշխատանքայի տեղի կազմակերպումը, անհրաժեշտ գծագրական պիտույքներն ու պարագաները 2) Ներկայացնել գծագրության կանոնները, պատկերել պարզ երկրաչափական պատկերները, դրանց հարթ և տարածական ձևերը
Մոդուլի գնահատման կարգը	<p>Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:</p>
Ուսումնառության արդյունք 1	<p>Ներկայացնել գծագրողի աշխատանքայի տեղի կազմակերպումը, անհրաժեշտ գծագրական պիտույքներն ու պարագաները</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) Կարողանում է ճիշտ կազմակերպել գծագրողի աշխատանքային տեղը, 2) Կարողանում է կիրառել գծագրական պիտույքները՝ մատիտ, կարկին, չափակարկին, տարատեսակ քանոններ, համապատասխան գծագրական թղթեր:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատելու համար ուսանողին հանձնարարվելու է կոնկրետ իրավիճակում կազմակերպել աշխատանքային տեղը և կիրառել գծագրական պիտույքները:</p> <p>Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. գծագրական պիտույքների տեսակները և բնութագրերը, գծագրական թղթի ընդունված ֆորմատներ, գծագրման ընդունված մասշտաբներ, կիրառվող պայմանական նշանակումներ և չափագրումներ, գծագրման ընդունված կանոնները, մատիտների, չափակարկիչների, քանոնների տեսակները:</p> <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքը կատարվել է բացարձակ ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ գծագրական պիտույքների տեսականին, գծագրության սեղաններ, տեղեկատուներ, պատրաստի գծագրերի ցուցադրական նմուշներ: Ուսուցումը նպատակահարմար է իրականացնել կաբինետային պայմաններում:</p>

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել գծագրության կանոնները, պատկերել պարզ երկրաչափական պատկերները, դրանց հարթ և տարածական ձևերը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է գծում պարզ երկրաչափական պատկերները՝ շրջանագիծ, օվալ, քառակուսի, շեղանկյուն, ուղղանկյուն, սեղան, բազմանկյուն, կարողանում է ճիշտ չափադրել, 2) կատարում է ճիշտ գծանշումներ, լծորդումներ, կատարում է զուգահեռ, ուղղահայաց, փոխուղղահայաց, հատվող, պահանջվող անկյունով գծերի կառուցումներ, 3) կատարում է տրված շրջանագծի բաժանումներ՝ շրջանագիծը բաժանում է մի քանի հավասար մասերի, կարողանում է գտնել շրջանագծի կենտրոնը, շառավիղը, 4) կատարում է պարզ երկրաչափական եռաչափ մարմինների՝ գունդ, գլան, կոն, բուրգ 3 ստանդարտ տեսքերի և աքսոնոմետրայի կառուցում, 5) պատկերի 3 տեսքի առկայության դեպքում կարող է կատուցել պատկերի եռաչափ մարմինը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել առնվազն հինգ տարբեր երկրաչափական կառուցումներ ուսանողի հմտությունները ստուգելու նպատակով:</p> <p style="padding-left: 40px;">Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - պարզ երկրաչափական պատկերների՝ շրջանագիծ, օվալ, քառակուսի, շեղանկյուն, ուղղանկյուն, սեղան, բազմանկյուն, կառուցումը և չափադրումը, - լծորդումների, զուգահեռ, ուղղահայաց, հատվող, խաչվող ուղիղների կառուցումը, - շրջանագծերի բաժանումը մի քանի մասերի (երկու , երեք , չորս , վեց մասերի), - երկրաչափական մարմինների՝ գունդ, գլան, կոն, բուրգ , երեք ստանդարտ տեսքերի և աքսոնոմետրիայի կառուցումը:

	<p>Յուրաքանչյուր երկրաչափական պատկերի կառուցումը պետք է տևի միջինը 20 րոպե: Լրացուցիչ ժամանակ կտրամադրվի նաև հարցերի համար: Ուսանողը պետք է էսքիզները ներկայացնի երեք պրոյեկցիաներով:</p> <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում եթե առաջադրանքը կատարված է հիմնականում անսխալ, պահպանված են անհրաժեշտ համաչափությունները և սահմանված չափանիշները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ գծագրական պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 36 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ԷՍՔԻԶ, ԳԾԱՆԿԱՐ ԵՎ ԳՈՒՆԱՆԿԱՐ >>	
Մոդուլի դասիչը	ՈՍԿ 3-14-003
Մոդուլի նպատակը	Ուսանողի մոտ ձևավորել կարողություններ կառուցման, ծավալային լուծումների, շտրիխապատման, լույսի-ստվերի արտացոլման, գունային լուծումների, ձեռքով աշխատանքային էսքիզ անելու վերաբերյալ:
Մոդուլի տևողությունը	48 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 36 ժամ
Մուտքային պահանջները	Մոդուլն ուսումնասիրելու համար նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ:
Ուսումնառության արդյունքները	<ol style="list-style-type: none"> 1) Ներկայացնել էսքիզ , գծանկար և գունանկար կատարելու համար անհրաժեշտ նյութերը և կարողանալ ճիշտ կիրառել 2) Կատարել զարդանախշերի պատկերում 3) Կատարել պատկերի և դրա փովածքի պատկերում 4) Կատարել պարզ առարկաների գունանկար 5) Ստեղծել էսքիզներ՝ օգտագործելով գույների, նրբերանգների, լույսի աղբյուրի ճիշտ բաշխումը

Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել էսքիզ , գծանկար և գունանկար կատարելու համար անհրաժեշտ նյութերը և կարողանալ ճիշտ կիրառել
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է թվարկում գծանկարի և գունանկարի համար անհրաժեշտ նյութերը՝ թուղթ, մատիտ, ռետին, ածուխսանգինա, պլաստիլին, ներկեր, վրձիններ,</p> <p>2) ճիշտ է պատրաստում թուղթը և մատիտները գծանկարի համար,</p> <p>3) վարժ գծում է առանցքներ, զուգահեռ և ուղղահայաց գծեր:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է նախապատրաստել գծանկարի և գունանկարի համար անհրաժեշտ նյութերը, գծել առանցքներ, զուգահեռ և ուղղահայաց գծեր :</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - Գծանկարի ու գունանկարի համար անհրաժեշտ նյութերի ներկայացումը, - Թղթերի, մատիտների ու այլ պիտույքների նախապատրաստումը, - Առանցքային , զուգահեռ և ուղղահայաց գծերի գծագրումը: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքը կատարվել է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ գծագրական պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Կատարել զարդանախշերի պատկերում
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է կառուցում զարդանախշը,

	<p>2) ճիշտ է տիրապետում գծի պլաստիկային,</p> <p>3) ճիշտ է լուծում ծավալի արտահայտման խնդիրները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կոնկրետ առաջադրանք առնվազն երեք զարդանախշի կառուցում , ծավալային պատկերների կառուցում:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> - Հայկական զարդարվեստների զարդանախշերի պատկերումը, - լծորդումների, ուղիղ, կոր գծերի կառուցումը, - ոսկերչությունում կիրառվող զարդանախշերի պատկերումը, <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքը կատարվել է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ գծագրական պարագաներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Կատարել պատկերի և դրա փովածքի պատկերում</p>
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է կատարում կառուցումները,</p> <p>2) ճիշտ է լուծում լույս-ստվերի արտահայտումը,</p> <p>3) ճիշտ է ստանում ծավալը,</p> <p>4) ճիշտ է ստանում լույս-ստվերային հակադրությունները և անդրադարձումները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել եռաչափ կառուցումներ, գծապատկերներ և գունապատկերներ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> - Պարզ երկարաչափական մարմինների՝ գունդ, գլան, բուլբ, կոն 3 ստանդարտ տեսքերի և եռաչափ

	<p>պատկերումը</p> <ul style="list-style-type: none"> - եռաչափ մարմինների վրա լույս –ստվերային հակադրությունների արտահայտումը: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքը կատարվել է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ գծագրական և նկարչական պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Կատարել պարզ առարկաների գունանկար
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է երանգավորում պատկերը, 2) կարողանում է պատկերել լույս-ստվեր, ծավալ, 3) ճիշտ է պատկերում պատկերի նյութականությունը, 4) ճանաչում է տաք և սառը գույները, 5) ճիշտ է պատկերում գույները և երանգները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել պատկերների գունավորումներ և երանգավորումներ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> - Պատկերների երանգավորման արտահայտումը, - Ֆոների, երկրորդ պլանների պատկերումը: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքը կատարվել է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ գծագրական և նկարչական պարագաներ:
Ուսուցման երաշխավորված	տեսական ուսուցում՝ 2 ժամ

Ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Ստեղծել էսքիզներ՝ օգտագործելով գույների, նրբերանգների, լույսի աղբյուրի ճիշտ բաշխումը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է պատկերում գունահարաբերությունները, 2) կարողանում է հասնել գունային ներդաշնակության, 3) ճիշտ է ապահովում գունատարածքի հավասարակշռությունը:
Գնահատման միջոցը	Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել էսքիզ , որտեղ պետք է կատարել գույների և երանգների ճիշտ բաշխումներ և հասնել գունային ներդաշնակության : Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներ. - Գունահարաբերությունների պատկերումը, - գույների բաշխման հավասարակշռության պահպանման եղանակները: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե առաջադրանքը կատարվել է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ նկարչական պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԻՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՄԱՁՈՒԼՎԱԾՔԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ>>	
Մոդուլի դասիչը	ՈՍԿ 3 -14-004
Մոդուլի նպատակը	Ուսանողի մոտ ձևավորել կարողություններ անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանման, ոսկերչական իրի համար պահանջվող հարգի համաձուլվածք ստանալու, այն ձուլակտորի վերածելու, կշռելու և գրանցելու վերաբերյալ:
Մոդուլի տևողությունը	24 ժամ, որից՝

	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 18 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈՍԿ 3-14-001 «Մասնագիտության ներածություն և նյութագիտություն» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	1) Աշխատանքային սեղանը նախապատրաստել ձուլակտոր պատրաստելու գործողությանը, հաշվարկել ձուլակտորի բաղադրիչների չափաքանակները, ստանալ հաշվարկած բաղադրիչները, 2) Ստանալ պահանջվող հարգի համաձուլվածքի ձուլակտոր՝ չգերազանցելով նախատեսված կորուստի սահմանված չափաքանակը և ստուգել ստացված ձուլակտորի հարգը, 3) Կշռել ստացված ձուլակտորը և կատարել գրանցում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Աշխատանքային սեղանը նախապատրաստել ձուլակտոր պատրաստելու գործողությանը, հաշվարկել ձուլակտորի բաղադրիչների չափաքանակները, ստանալ հաշվարկած բաղադրիչները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ձուլակտոր պատրաստելու համար աշխատասեղանի կազմակերպման կարգը, 2) ճիշտ է հաշվարկում մետաղական խառնուրդի բաղադրիչները և կատարում բաղադրիչների չափաքանակների կշռում, 3) ճիշտ է որոշում հալման ջերմաստիճանը և եղանակը, 4) ճիշտ է ընտրում ձուլակտոր պատրաստելու համար անհրաժեշտ գործիքները, օժանդակ նյութերն ու կաղապարը, 5) ստանում է համաձուլվածքի համար անհրաժեշտ բաղադրիչները, կատարում է գրանցումներ, 6) ծանոթ է ՀՀ ում կիրառվող թանկարժեք մետաղների հարգերին և դրանց թույատրելի շեղումների:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվում է թեսթային առաջադրանք և գործնական հանձնարարություն կատարելու հիման վրա: Թեստային առաջադրանքով ստուգվելու է կոնկրետ հարգի և գույնի ոսկու համաձուլվածքի ստացման համար

	<p>անհրաժեշտ մետաղական խառնուրդի բաղադրիչների և դրանց չափաբաժինների հաշվարկումը: Գործնական առաջադրանքով ուսանողին հանձնարարվելու է նախապատրաստվել ձուլակտոր պատրաստելու գործընթացին, հաշվարկել, կշռել ,գրանցել մետաղական խառնուրդի բաղադրիչները, նախապատրաստել անհրաժեշտ գործիքները, օժանդակ նյութերն ու կաղապարը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <ul style="list-style-type: none"> - Պահանջվող հարգի և գույնի համաձուլվածքի ստացման համար անհրաժեշտ բաղադրիչների և դրանց չափաքանակների հաշվարկումը, - մետաղական բաղադրիչների կշռումը, գրանցումը, - հալման պրոցեսի համար անհրաժեշտ գործիքների, օժանդակ նյութերի և կաղապարի նախապատրաստումը: <p>Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը թեստային առաջադրանքը ճիշտ լրացնի 90 տոկոսով և գործնական հանձնարարականը կատարի ճիշտ:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքերի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տեղեկատու գրականություն, ոսկերչական կշեռք, ձուլակտորի բաղադրիչներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 2</p>	<p>Ստանալ պահանջվող հարգի համաձուլվածքի ձուլակտոր՝ չգերազանցելով նախատեսված կորուստի սահմանված չափաքանակը և ստուգել ստացված ձուլակտորի հարգը</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) հալեցումը կատարում է հնարավորինս խուսափելով կորուստներից, 2) հալված մետաղը ճիշտ է լցնում կաղապարի մեջ, 3) ստացված ձուլակտորը համապատասխանում է պահանջվող հարգին,կատարում է ստուգում հարգորոշման քարի վրա, 4) գործողությունները կատարվում են անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջներին համապատասխան:

Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի կատարման հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է պատրաստել պահանջվող հարգի ձուլակտոր, ապա այն ստուգել հարգորոշման քարի վրա:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <ul style="list-style-type: none"> - Պահանջվող հարգի ձուլակտորի ստացումը՝ մետաղական խառնուրդների հալեցման միջոցով, - ձուլակտորի հարգի ստուգումը հատուկ հարգորոշման քարի վրա: <p>Արդյունքի յուրացումը դրական կհամարվի , եթե հանձնարարությունը կատարվի ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքերի միջոցով: Արդյունքի ուսուցումը իրականացվում է ոսկերչական արհեստանոցում: Անհրաժեշտ է ունենալ տեղեկատու գրականություն, հալեցման կատարման պարագաներ, կաղապարներ, հարգորոշման քար և հակազդուկներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Կշռել ստացված ձուլակտորը և կատարել գրանցում</p>
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է կշռում ձուլակտորը, 2) համապատասխան գրանցումը ճիշտ է կատարում:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի կատարման հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կշռել ձուլակտորը և կատարել գրանցումներ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մասնրամասները</p> <ul style="list-style-type: none"> - Ոսկերչական կշեռքներից օգտվելու կարգը, դրանց ճշտությունները, - գրանցման փաստաթղթերի ստանդարտ ձևերը, դրանցում գրանցումներ կատարելու կարգը: <p>Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե հանձնարարությունը կատարվի բացարձակ ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքերի միջոցով: Արդյունքի ուսուցումը իրականացվում է ոսկերչական արհեստանոցում: Անհրաժեշտ է ոսկերչական կշեռք, գրանցման ձևաթղթեր և պիտույքներ:</p>

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ՇԻՆՎԱԾՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ: ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄ ԳԼՈՑՄԱՆ ԵՎ ԼԱՐԱՁԳՄԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ>>	
Մոդուլի դասիչը	ՈՍԿ 3-14-005
Մոդուլի նպատակը	Ուսանողի մոտ ձևավորել կարողություններ աշխատանքային էսքիզից, գծագրից և տեխնիկական քարտից օգտվելու, գլոցման և լարածգման համար նախատեսված գործիքներն ու սարքերն օգտագործելու, գլոցման և լարածգման եղանակով տեխնիկական քարտում նշված չափերով և պրոֆիլներով նախապատրաստուքներ պատրաստելու վերաբերյալ:
Մոդուլի տևողությունը	24 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 18 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈՍԿ 3-14-001 <<Մասնագիտության ներածություն և նյութագիտություն>>, ՈՍԿ 3-14-002 <<Գծագրություն և եռաչափ կառուցումներ>>, ՈՍԿ 3-14-004 <<Ոսկերչական իրի համար նախատեսված համաձուլվածքի պատրաստում>> մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	1) Կարողանալ օգտվել աշխատանքային էսքիզից, գծագրից և կարդալ տեխնիկական քարտը 2) Տարբերակել գլոցման և լարածգման գործիքները, սարքերը, օժանդակ նյութերն ու հարմարանքները, ընտրել դրանցից օգտվելու եղանակը 3) Կատարել գլոցում և լարածգում
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կարողանալ օգտվել աշխատանքային էսքիզից, գծագրից և կարդալ տեխնիկական քարտը

Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում աշխատանքային էսքիզի վրա գլոցման և լարածգման եղանակով ստացված նախապատրաստուկներից պատրաստվող մանրակները,</p> <p>2) ճիշտ է կարդում տեխնիկական քարտում նշված նախապատրաստուկների չափերը և պրոֆիլները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանք կատարելու հիման վրա: Ուսանողին հանաձնարարվելու է տարբեր բարդության ոչ պակաս քան 2 ական էսքիզներ, գծագրեր և տեխնիկական քարտեր կարդալ: Յուրաքանչյուր առաջադրանքում ուսանողը պետք է ներկայացնի այն մանրակները, որոք պատրաստվելու են գլոցման և լարածգման եղանակով և տեխնիկական քարտում ցույց տա դրանց չափսերը և պրոֆիլները: Յուրաքանչյուր առաջադրանքի տրամադրվելու է ոչ ավել քան 15 րոպե ժամանակ</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - Աշխատանքային գծագրերի կարդալը, դրանցում օգտագործվող չափադրումները, թույլվածքները, մակերևույթների մաքրության նշանակումները, համառանգության , զուգահեռության, բազաների նշանակումները, - տեխնիկական քարտերի կազմման ձևերը , դրանում նշվող պարամետրերի և նշանակումների բացատրությունները: <p>Արդյունքի յուրացումը բավարար կհամարվի, եթե առաջադրանքը ընդհանուր առմամբ ճիշտ է կարդում, սակայն հնարավոր են մասնակի, ոչ էական բացթողումներ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ոսկերչական իրերի աշխատանքային էսքիզների, գծագրերի և տեխնիկական քարտերի նմուշներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	<p>Տարբերակել գլոցման և լարածգման գործիքները, սարքերը, օժանդակ նյութերն ու հարմարանքները, ընտրել դրանցից օգտվելու եղանակը</p>
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում գլոցման և լարածգման սարքերը և նրանց օգտագործման ձևերը,</p>

	<p>2) ճիշտ է ընտրում լարածգման համար նախատեսված օժանդակ նյութերը,</p> <p>3) ճիշտ է ընտրում օժանդակ հարմարանքները և դրանցից օգտվելու եղանակը:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվելու է լարածգման սարքերի տեսակների, պրոցեսի համար նախատեսված օժանդակ նյութերի տեսակների, հարմարանքների իմացությունը: Գործնական առաջադրանքի ժամանակ ստուգվում է լարածգման սարքերից ու օժանդակ հարմարանքներից օգտվելու ձևը , երբ ուսանող ըստ կոնկրետ առաջադրանքի ընտրում է լարածգման գործիքները ու լրացուցիչ օժանդակ հարմարանքներն ու նյութերը: Առաջադրված գործնական իրավիճակներում պահպանում է անվտանգության տեխնիկայի պահանջները:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - Գլոցման հաստոցը, դրա աշխատանքի սկզբունքը, - լարածգման սարքը, դրա աշխատանքի սկզբունքը, - լարածգման համար կորզանների ամրացման ձևերը, - գլոցման և լարածգման համար նախատեսված օժանդակ նյութերի տեսակները, - կորզանների տեսակները՝ կլոր, քառակուսի և տարատեսակ պրոֆիլներով, - կորզանների վրա կորզանման հերթականությունը: <p>Արդյունքը համարվում է դրական , եթե հանձնարարությունը կատարվում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքի միջոցով: Ուսուցումը իրականացվում է անհրաժեշտ կահավորում ունեցող ոսկերչական արհեստանոցում:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	Կատարել գլոցում և լարածգում
Կատարման չափանիշներ	1) ըստ աշխատանքային քարտի՝ ճիշտ է ընտրում գլոցման և լարածգման սարքերի վրա գտնվող համապատասխան

	<p>պրոֆիլի դռները և լարածգման անցքերը,</p> <p>2) ճիշտ է կատարում գլոցման և լարածգման գործողությունները,</p> <p>3) պահպանում է մետաղի համապատասխան ժամանակում ջերմային մշակման ռեժիմը,</p> <p>4) ստացված նախապատրաստուքները համապատասխանում են աշխատանքային քարտում նշված չափերին և պրոֆիլներին,</p> <p>5) նախապատրաստուքների աշխատանքային մեխանիկական հատկությունները պահպանված են,</p> <p>6) գործողությունները կատարվում են անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջներին համապատասխան,</p> <p>7) աշխատանքի կատարման ժամանակ կորուստները թույլատրելի սահմաններում են :</p>
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական հանձնարարություն կատարելու հիման վրա: Ուսանողը պետք կատարի գլոցման ոչ պակաս 3, իսկ լարածգման՝ ոչ պակաս 2 գործողություն:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - Համապատասխան պրոֆիլների դռների և կորզանման անցքերի ընտրությունը, - գլանման և լարածգման աշխատանքների իրականացումը, - գործընթացի ժամանակ պահանջվող միջանցիկ ջերմամշակման ռեժիմների ընտրությունը, - ստացված պրոֆիլների չափումը և գծագրի կամ աշխատանքային քարտի հետ համեմատումը, - ստացված մանրակների մեխանիկական հատկությունները: <p>Արդյունքը համարվում է դրական , եթե հանձնարարությունը կատարվում է բացարձակ ճիշտ:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքի միջոցով: Ուսուցումը իրականացվում է անհրաժեշտ կահավորում ունեցող ոսկերչական արհեստանոցում, անհրաժեշտ են գլոցման և լարածգման հաստողներ և գործիքներ, ջերմամշակման վառարաններ, լարածգման և գլոցման մետաղներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ՇԻՆՎԱԾՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ: ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ ԵՎ ՄԱՆՐԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՓԱԿԱՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՈՎ>>

Մոդուլի դասիչը	ՈՍԿ 3-14-006
Մոդուլի նպատակը	Ուսանողի մոտ ձևավորել ոսկերչական իրերի համար մանրակները և նախապատրաստուկները փականագործական եղանակով պատրաստելու կարողություններ և հմտություններ:
Մոդուլի տևողությունը	48 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 14 ժամ գործնական աշխատանք՝ 34 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈՍԿ 3-14-005 <<Ոսկերչական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ: Նախապատրաստուկների ստացում գլոցման և լարածգման եղանակով >> մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	<ol style="list-style-type: none"> 1) Կատարել չափանշման աշխատանքներ և չափիչ գործիքներով չափումներ 2) Կատարել խարտման աշխատանքներ 3) Կատարել կտրման և հատման աշխատանքներ 4) Կատարել շաղափման և պարուրակման աշխատանքներ 5) Կատարել աշխատանք նրբասղոցով 6) Կատարել ռանդման և հղկման աշխատանքներ 7) Կատարել զոդման աշխատանքներ
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կատարել չափանշման աշխատանքներ և չափիչ գործիքներով չափումներ
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում չափանշում կատարելու համար նախատեսված գործիքները և նրանց օգտագործման ձևերը,

	<p>2) ըստ տեխնիկական էսքիզի կամ գծագրի ճիշտ է կատարում չափանշման աշխատանքները,</p> <p>3) գործողությունները կատարվում են անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջներին համապատասխան,</p> <p>4) կարողանում է ճիշտ ձևով կիրառել չափիչ գործիքները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքի հիման վրա: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվելու է ուսանողի իմացությունը չափանշման համար նախատեսված գործիքների տեսակների , իսկ գործնական առաջադրանքի ժամանակ ուսանողին կառաջադրվի կատարել տարբեր բարդության չափանշման ոչ պակաս 5 գործողություն:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - Չափանշման գործիքների տեսակները – կարկիներ, չափակարկիներ, - չափիչ գործիքների տեսակները, - գծանշումներ անելու հմտությունները: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում եթե առաջադրանքը կատարված է հիմնականում անսխալ :</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքի միջոցով: Ուսուցումը իրականացվում է անհրաժեշտ կահավորում ունեցող ոսկերչական արհեստանոցում, անհրաժեշտ են չափանշման համապատասխան գործիքներ և պիտույքներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	<p>Կատարել խարտման աշխատանքներ</p>
Կատարման չափանիշներ	<p>1) տարբերակում է խարտոցների տեսակները,</p> <p>2) ճիշտ է ընտրում տվյալ աշխատանքին համապատասխան խարտոցներ,</p> <p>3) ճիշտ է օգտվում խարտման համար նախատեսված օժանդակ հարմարանքներից,</p> <p>4) ճիշտ է կատարում խարտման գործընթացը,</p>

	<p>5) արդյունքը համապատասխանում է աշխատանքային էսքիզին կամ գծագրին, կատարվում է չափիչ գործիքներով ստուգում,</p> <p>6) գործողությունները կատարվում են անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջներին համապատասխան,</p> <p>7) աշխատանքի կատարման ժամանակ կորուստները թույլատրելի սահմաններում են:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական հանձնարարության հիման վրա: Ուսանողին կառաջադրվի կատարել տարբեր բարդության խարտման ոչ պակաս 5 գործողություն:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <ul style="list-style-type: none"> - Խարտոցների տեսակներն ու նշանակումները, - համապատասխան խարտոցների ընտրությունը՝ ըստ պահանջվող մակերեսի որակի, - խարտման համար նախատեսված օժանդակ հարմարանքները - խարտման իրականացման հմտությունները: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը նախապատրաստական բոլոր աշխատանքները կատարում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքի միջոցով: Ուսուցումը իրականացվում է անհրաժեշտ կահավորում ունեցող ոսկերչական արհեստանոցում, անհրաժեշտ են գործառույթը իրականացնելու պարագաներ՝ խարտոցներ, օժանդակ հարմարանքներ, չափիչ գործիքներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 5 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	Կատարել կտրման և հատման աշխատանքներ
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում կտրման-հատման համար նախատեսված գործիքներն ու հարմարանքները,</p> <p>2) ճիշտ է ընտրում մկրատների և հատիչների տեսակները՝ ըստ անհրաժեշտության,</p> <p>3) ճիշտ է ընտրում հատման համար նախատեսված օժանդակ հարմարանքները,</p>

	<p>4) ճիշտ է կատարում կտրման և հատման գործողությունը,</p> <p>5) գործողությունները կատարվում են անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջներին համապատասխան,</p> <p>6) արդյունքը համապատասխանում է աշխատանքային էսքիզին կամ գծագրին, կատարվում է չափիչ գործիքներով ստուգում,</p> <p>7) աշխատանքի կատարման ժամանակ կորուստները թույլատրելի սահմաններում են:</p>
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական հանձնարարության հիման վրա: Ուսանողին կառաջադրվի կատարել տարբեր բարդության կտրման ոչ պակաս 3 և հատման ոչ պակաս 3 գործողություն:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները</p> <ul style="list-style-type: none"> - Կտրման- հատման գործիքների տեսակները / մկրատներ, հատիչներ, կտրիչներ/, - Ըստ կոնկրետ առաջադրանքի դրանց ընտրության մեթոդները, - Կտրման – հատման համար նախատեսված օժանդակ նյութերը և հարմարանքները, - Կտրված – հատված դետալի չափման և գծագրին համապատասխանության ստուգման ձևերը: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը բոլոր աշխատանքները կատարում է 90 տոկոսով ճիշտ:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքի միջոցով: Ուսուցումը իրականացվում է անհրաժեշտ կահավորում ունեցող ոսկերչական արհեստանոցում,անհրաժեշտ են գործառույթը իրականացնելու պարագաներ՝ կտրման հատման գործիքներ , օժանդակ հարմարանքներ, մկրատներ, հատիչներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք ` 5 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 4</p>	<p>Կատարել շաղափման և պարուրակման աշխատանքներ</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) ճիշտ է ներկայացնում շաղափման և պարուրակման համար անհրաժեշտ գործիքները և սարքերը, շաղափների և պարուրակների տեսակները, նրանց աշխատանքային ոլորտը, շաղափման և պարուրակման համար նախատեսված օժանդակ նյութերն ու հարմարանքները,</p>

	<p>2) ճիշտ է ընտրում տվյալ աշխատանքի կատարման համար անհրաժեշտ շաղափման և պարուրակման գործիքները, հարմարանքները, պտտման արագության ռեժիմը, օժանդակ նյութերը և սարքերը,</p> <p>3) ճիշտ է կատարում շաղափման և պարուրակման գործողությունը,</p> <p>4) գործողությունները կատարվում են անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջներին համապատասխան,</p> <p>5) արդյունքը համապատասխանում է աշխատանքային էսքիզին կամ գծագրին, կատարվում է չափիչ գործիքներով ստուգում,</p> <p>6) աշխատանքի կատարման ժամանակ կորուստները թույլատրելի սահմաններում են:</p>
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական հանձնարարության հիման վրա: Ուսանողին կառաջադրվի կատարել տարբեր բարդության շաղափման ոչ պակաս 3 և պարուրակման ոչ պակաս 3 գործողություն:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - Գալիկոնման սարքը , դրա աշխատանքի սկզբունքը, - շաղափման և պարուրակման գործիքները, դրանց տեսակները, - գայլիկոնների և պարուրակների տեսակները , ստանդարտ նշանակումներն ու չափսերը, - գալիկոնման և շաղափման կատարման հմտությունները, - շաղափման և պարուրակման համար նախատեսված օժանդակ հարմարանքներն ու սարքավորումները: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը բոլոր աշխատանքները կատարում է 90 տոկոսով ճիշտ:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքի միջոցով: Ուսուցումը իրականացվում է անհրաժեշտ կահավորում ունեցող ոսկերչական արհեստանոցում, անհրաժեշտ են համապատասխան գործիքներ, սրաքավորումներ, օժանդակ հարմարանքներ, չափիչ գործիքներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 5 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 5</p>	<p>Կատարել աշխատանք նրբասղոցով</p>

<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) ճիշտ է ներկայացնում սղոցման համար նախատեսված գործիքները, հարմարանքներն ու օժանդակ նյութերը, 2) ճիշտ է ընտրում տվյալ աշխատանքի կատարման համար անհրաժեշտ նրբասղոցի չափերն ու աշխատանքի կատարման ձևը, 3) ճիշտ է կատարում սղոցման գործողությունը, 4) ժամանակին է օգտվում սղոցման համար նախատեսված օժանդակ նյութերից, 5) պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները, 6) արդյունքը համապատասխանում է աշխատանքային էսքիզին կամ գծագրին, կատարվում է չափիչ գործիքներով ստուգում, 7) աշխատանքի կատարման ժամանակ կորուստները թույլատրելի սահմաններում են:</p>
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական հանձնարարության հիման վրա: Ուսանողին կառաջադրվի կատարել տարբեր բարդության 5 սղոցման գործողություն:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - Սղոցման համար անհրաժեշտ գործիքները, օժանդակ նյութերը, - սղոցում կատարելու հմտությունները, - մանրասղոցների տեսակները, ստանդարտ պրոֆիլներն ու չափսերը: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը բոլոր աշխատանքները կատարում է ճիշտ՝ ոչ էական թերություններով:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքի միջոցով: Ուսուցումը իրականացվում է անհրաժեշտ կահավորում ունեցող ոսկերչական արհեստանոցում, անհրաժեշտ են տարբեր չափսերի նրբասղոցներ, օժանդակ սարքավորումներ ու պիտույքներ, չափիչ գործիքներ, կտրման շաբլոններ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 5 ժամ</p>

Ուսումնառության արդյունք 6	Կատարել ռանդման և հղկման աշխատանքներ
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում ռանդման և հղկման համար նախատեսված գործիքները, օժանդակ նյութերն ու հարմարանքները,</p> <p>2) ճիշտ է ընտրում տվյալ աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ռանդող գործիքը և հղկման համար անհրաժեշտ համարի հղկաթուղթը, ռետինե սկավառակը,</p> <p>3) ճիշտ է կատարում ռանդման և հղկման գործողությունը,</p> <p>4) ժամանակին օգտվում է անհրաժեշտ չափերի հղկաթղթից և ռետինե սկավառակից,</p> <p>5) գործողությունները կատարվում են անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջներին համապատասխան,</p> <p>6) արդյունքը համապատասխանում է աշխատանքային էքզիզին կամ գծագրին, կատարվում է չափիչ գործիքներով ստուգում,</p> <p>7) աշխատանքի կատարման ժամանակ կորուստները թույլատրելի սահմաններում են:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական հանձնարարության հիման վրա: Ուսանողին կառաջադրվի կատարել տարբեր բարդության ռանդման և հղկման 6 գործողություն:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - Ռանդման- հղկման գործիքները, օժանդակ նյութերը, - ռանդմա, հղկման կատարման հմտությունները, - հղկաթղթերի տեսակները, նշանակումները, օգտագործման ձևը, - ռետինե սկավառակների տեսակներն ու նշանակումները, օգտագործման ձևը: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը բոլոր աշխատանքները կատարում է ճիշտ՝ ոչ էական թերություններով:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքի միջոցով: Ուսուցումը իրականացվում է անհրաժեշտ կահավորում ունեցող ոսկերչական արհեստանոցում,անհրաժեշտ են ռանդման և հղկման համար

	նախատեսված գործիքները, օժանդակ նյութեր ու հարմարանքներ/ հղկաթղթեր, ռետինե սկավառակներ/ :
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 5 ժամ
Ուսումնառության արդյունք 7	Կատարել զոդման աշխատանքներ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում զոդման համար նախատեսված գործիքները, հարմարանքները և օժանդակ նյութերը, 2) ճիշտ է ընտրում զոդվող մետաղին համապատասխանող զոդանյութի տեսակը (լար, թիթեղ, փոշի, մածուկ) և հարգը, 3) ճիշտ է ընտրում զոդման համար նախատեսված ֆյուսները և պատրաստում ֆյուսային լուծույթներ, 4) ճիշտ է կատարում զոդվող իրի յուղագրկումը թթուների լուծույթներում, 5) ճիշտ է ընտրում զոդող գործիքների աշխատանքային և ջերմային ռեժիմը, 6) ճիշտ է կատարում զոդման գործողությունը, 7) աշխատանքի կատարման ժամանակ կորուստները թույլատրելիի սահմաններում են, 8) գործողությունները կատարվում են անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջներին համապատասխան:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական հանձնարարության հիման վրա: Ուսանողին կառաջադրվի ընտրել տրված առաջադրանքին համապատասխան զոդման ձևը, զոդանյութի տեսակը և կատարել ոչ պակաս քան 4 տարբեր բարդության զոդումներ: Ուսանողը պետք է կատարի նաև օժանդակ գործողություններ՝ յուղագրկում, ֆյուսային լուծույթների պատրաստում:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - Ջոդման համար անհրաժեշտ գործիքներն ու օժանդակ նյութերը, - Ջոդում կատարելու հմտությունները, տարատեսակ/ ուժեղ, թույլ, ուղիղ, փռված / կրակների օգտագործման ձևերը և կիրառման ոլորտը - զոդանյութերի տարատեսակները ըստ տեսքի՝լար, թիթեղ , փոշի , մածուկ,

	<ul style="list-style-type: none"> - գոդանյութերի տարատեսակները ըստ հալման ջերմաստիճանի՝ պինդ, միջին, թույլ, դրանց պատրաստման եղանակը, - ֆյունների տեսակները՝ փոշի, հեղուկ, դրանց պատրաստման եղանակը, - յուղագրկման լուծույթների տեսակները, դրանց քիմիական բաղադրությունը, պատրաստման եղանակը: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը բոլոր աշխատանքները կատարում է՝ ճիշտ՝ որոշ աննշան թերություններով:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքի միջոցով: Ուսուցումը իրականացվում է անհրաժեշտ կահավորում ունեցող ոսկերչական արհեստանոցում, անհրաժեշտ են զոդման համար նախատեսված գործիքները, օժանդակ նյութեր ու լուծույթներ, տարբեր տեսակների զոդանյութեր, զոդվող մետաղներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 5 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ՇԻՆՎԱԾՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ: ՄԱՆՐԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԴՐՈՇՄՄԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ>>	
Մոդուլի դասիչը	ՈՍԿ 3-14-007
Մոդուլի նպատակը	Ուսանողի մոտ ձևավորել դրոշմման եղանակով ոսկերչական շինվածքի մանրակներ պատրաստելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	<p>18 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ</p>
Մուտքային պահանջները	<p>Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈՍԿ 3-14-004 <<Ոսկերչական իրի համար նախատեսված համաձուլվածքի պատրաստում>> և ՈՍԿ 3-14-005 <<Ոսկերչական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ: Նախապատրաստուկների ստացում գլոցման և լարածգման եղանակով>></p>

	մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	<p>1) Կարողանալ ներկայացնել դրոշմման, դրոշմում կատարելու համար նախատեսված հարմարանքների և գործիքների աշխատանքի սկզբունքները</p> <p>2) Հաշվարկել մետաղյա թիթեղի հաստությունը և դրոշմման ուժը, սահմանել դրոշմման հերթականությունը</p> <p>3) Կատարել դրոշմման և պատրաստի իրի չափման գործընթացը</p>
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կարողանալ ներկայացնել դրոշմման, դրոշմում կատարելու համար նախատեսված հարմարանքների և գործիքների աշխատանքի սկզբունքները
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում դրոշմման աշխատանքի սկզբունքները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում դրոշմների աշխատանքի սկզբունքները, տարբերակում է դրոշմման հարմարանքները և գործիքները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է խմբային հարց պատասխանների և քննարկումների հիման վրա: Քննարկման ընթացքում անդրադարձ է կատարվելու դրոշմման գործընթացին և աշխատանքի սկզբունքին: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - Դրոշմման սարքավորումների , դրոշմիչների տարատեսակները, դրանցով աշխատելու սկզբունքը, - հիդրավլիկ և մեխանիկական մամլիչների տեսակները, դրանց աշխատանքի սկզբունքը, - ձեռքի և ավտոմատ սկզբունքով աշխատող մամլիչները, դրանց վրա աշխատանքի սկզբունքը: <p>Արդյունքը համարվում է բավարար, եթե ընդհանուր առմամբ տրվում է ճիշտ պատասխան, հնարավոր են որոշակի թերություններ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքի միջոցով: Ուսուցումը իրականացվում է անհրաժեշտ կահավորում ունեցող ոսկերչական արհեստանոցում, որտեղ կան դրոշմման սարքավորումներ, այդ

	սարքավորումների գծագրերն ու հատույթները, ցուցադրական նյութեր, մասնագիտական գրքեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Հաշվարկել մետաղյա թիթեղի հաստությունը և դրոշմման ուժը, սահմանել դրոշմման հերթականությունը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է հաշվարկում մետաղյա թիթեղի հաստությունը և դրոշմման ուժը՝ կախված դրոշմվող մանրակի ձևից, նյութից և չափսերից, 2) ճիշտ է ընտրում հարվածող կամ սեղմող դրոշմիչի ուժային ռեժիմը՝ կախված մետաղյա թիթեղի հաստությունից, 3) ճիշտ է հաշվարկում դրոշմվող մետաղի ջերմամշակման ռեժիմը:
Գնահատման միջոցը	Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է հարց պատասխանների և հաշվարկներ կատարելու հմտության գնահատման միջոցով: Ուսանողը պետք է ցուցաբերի գիտելիքներ ուժային և ջերմամշակման ռեժիմների ընտրության վերաբերյալ, և ըստ առաջադրված մանրակի ձևի, չափսի և նյութի հաշվարկի դրոշմվող մետաղյա թիթեղի հաստությունը, դրոշմման ուժը և ջերմամշակման ռեժիմը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. <ul style="list-style-type: none"> - Դրոշմվող դետալների համար թիթեղների հաստության ընտրությունը, - դրոշմման ճիգի հաշվարկման բանաձևը , - դրոշմվող դետալի համապատասխան ֆիզիկական պարամետրերի ապահովումը՝ ջերմամշակման միջոցով, - դրոշմիչների նյութի ընտրությունը: Արդյունքը համարվում է բավարար, եթե հաշվարկները կատարված են բավարար ճշտությամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական պարապմունքի միջոցով՝ համակարգչային սենյակում: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական ու տեղեկատու գրականություն, ցուցադրական նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ

Ուսումնառության արդյունք 3	Կատարել դրոշմման և պատրաստի իրի չափման գործընթացը
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է կատարում դրոշմումը՝ պահպանելով դրոշմման գործողությունների հերթականությունը,</p> <p>2) պահպանում է դրոշմիչի աշխատանքային ռեժիմը,</p> <p>3) կատարում է միջանկյալ ջերմամշակումներ,</p> <p>4) չափիչ գործիքով ստուգում է դրոշմված դետալի չափսերը,</p> <p>5) գործողությունները կատարվում են անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջներին համապատասխան:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական հանձնարարության հիման վրա: Ուսանողին կառաջադրվի կատարել դրոշման, միջանկյալ ջերմամշակման և աշխատանքի ավարտին դետալի չափման գործողություն:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - Դրոշման գործողությունների հերթականության ընտրությունը, - դրոշման գործընթացի կատարումը, - ջերմամշակման իրականացման ձևերը, ջերմամշակման վառարանների տեսակները, դրանց աշխատանքի սկզբունքը, - չափման և ստացված դետալի՝ զծագրին համապատասխանության ստուգումը: <p>Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը բոլոր աշխատանքները կատարում է ճիշտ՝ որոշ աննշան թերություններով:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական պարապմունքի միջոցով: Ուսուցումը իրականացվում է անհրաժեշտ կահավորում ունեցող ոսկերչական արհեստանոցում, անհրաժեշտ են դրոշմման սարքավորումներ, դրոշմիչներ, ջերմամշակման վառարաններ, չափիչ գործիքներ, դետալների զծագրեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ՇԻՆՎԱԾՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ ՄԱՆՐԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ	

ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ՄՈՄԻ ՓՈՐԱԳՐՄԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ>>

Մոդուլի դասիչը	ՈՍԿ 3-14-008
Մոդուլի նպատակը	Ուսանողի մոտ ձևավորել ոսկերչական մոմի փորագրման եղանակով ոսկերչական շինվածքի մանրակներ պատրաստելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 24 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈՍԿ 3-14-001 <<Մասնագիտության ներածություն և նյութագիտություն>> և ՈՍԿ 3-14-004 <<Ոսկերչական իրի համար նախատեսված համաձուլվածքի պատրաստում>> մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	1) Կարողանալ ներկայացնել ոսկերչական մոմերի տեսակները և կիրառության ոլորտը 2) Կատարել չափանշման աշխատանքներ 3) Կատարել փորագրման աշխատանքներ
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կարողանալ ներկայացնել ոսկերչական մոմերի տեսակները և կիրառության ոլորտը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է թվարկում ոսկերչական մոմերի տեսակներն ու ձևերը, 2) ճիշտ է ընտրում փորագրվող իրին համապատասխան մոմի տեսակը և ձևը:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվում է բանավոր հարց ու պատասխանի միջոցով, որի ժամանակ ուսանողին առաջադրվում են հարցեր մոմերի տեսակների և ձևերի, դրանց ընտրության վերաբերյալ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. - Ոսկերչական մոմերի տեսակները, դրանց կիրառության ոլորտները,

	<ul style="list-style-type: none"> - մոմի տեսակները ըստ կոշտության , - կոնկրետ առաջադրանքի համար մոմի ընտրության մեթոդները: <p>Արդյունքի յուրացումը բավարար է գնահատվում, եթե առաջադրված հարցերին պատասխանելիս ուսանողը ցուցաբերում է տեղեկացվածություն, կարողանում է գրագետ շարադրել պատասխանները: Առանձին բացթողումները կամ վրիպակները չեն կարող ազդել գնահատման վրա:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական պարապմունքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական ու տեղեկատու գրականություն, ցուցադրական նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Կատարել չափանշման աշխատանքներ
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում չափանշման համար նախատեսված գործիքներն ու դրանց օգտագործման ձևը, 2) ըստ էսքիզի կամ գծագրի ճիշտ է կատարում չափանշումը:
Գնահատման միջոցը	Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական առաջադրանքի ու դրա արդյունքների ներկայացման հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել չափանշման աշխատանքներ ըստ տրամադրված էսքիզի կամ գծագրի: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. <ul style="list-style-type: none"> - Չափանշման գործիքների տեսակները, դրանց կիրառման ձևերը, - չափանշումներ կատարելու հմտությունները: <p>Արդյունքի յուրացումը դրական է, եթե առաջադրանքը կատարվում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ չափանշման պիտույքեր, գծագրերի և էսքիզների օրինականեր:
Ուսուցման երաշխավորված	տեսական ուսուցում՝ 4 ժամ

Ժամաքանակը	գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Կատարել փորագրման աշխատանքներ
Կատարման չափանիշներ	<p>1) տարբերակում է փորագրող գործիքների սայրերի տեսակները՝ ըստ դրանց պրոֆիլների,</p> <p>2) ճիշտ է ընտրում տվյալ աշխատանքը կատարելու համար անհրաժեշտ սայրով գործիքները, փորիչները, խարտոցները,</p> <p>3) ճիշտ է օգտվում փորագրման համար նախատեսված օժանդակ հարմարանքներից,</p> <p>4) ճիշտ և վարժ է կատարում փորագրման գործընթացը,</p> <p>5) արդյունքը համապատասխանում է աշխատանքային էսքիզին կամ գծագրին, կատարում է չափումներ,</p> <p>6) գործողությունները կատարվում են անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջներին համապատասխան:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական առաջադրանքի ու դրա արդյունքների ներկայացման հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել տարբեր բարդության 2 փորագրման աշխատանքներ՝ ըստ տրամադրված էսքիզի կամ գծագրի:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - Փորագրման գործիքների սայրերի տեսակներ՝ ըստ պրոֆիլների, - անհրաժեշտ սայրով գործիքների, փորիչների, խարտոցների ընտրության մեթոդները, - փորագրման իրականացման ձևերը, - փորագրված դետալի չափման ձևերը: <p>Արդյունքի յուրացումը դրական է, եթե առաջադրանքը կատարվում է ճիշտ , որակով և գեղեցիկ, աննշան թերացումները չեն կարող ազդել գնահատականի վրա:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքի միջոցով: Ուսուցումը իրականացվում է անհրաժեշտ կահավորում ունեցող ոսկերչական արհեստանոցում, անհրաժեշտ են փորագրման գործիքներ, օժանդակ հարմարանքներ, համապատասխան փորագրման մոմեր, գծագրերի և էսքիզների օրինակներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ՇԻՆՎԱԾՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ: ՄԱՆՐԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՁՈՒԼՄԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ>>	
Մոդուլի դասիչը	ՈՍԿ 3-14-009
Մոդուլի նպատակը	Ուսանողի մոտ ձևավորել կաղապարման և ծուլման եղանակով ոսկերչական իրի նախաշինվածքներ, մանրակներ պատրաստելու կարողություն:
Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 24 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈՍԿ 3-14-001 <<Մասնագիտության ներածություն և նյութագիտություն>> և ՈՍԿ 3-14-004 <<Ոսկերչական իրի համար նախատեսված համաձուլվածքի պատրաստում>> մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	<ol style="list-style-type: none"> 1) Կարողանալ ներկայացնել կաղապարման և ծուլման եղանակով մանրակների պատրաստման համար օգտագործվող նյութերը 2) Տարբերակել կաղապարման և ծուլման եղանակով ոսկերչական նախաշինվածքի մանրակների պատրաստման համար կիրառվող սարքավորումները, գործիքներն ու հարմարանքները 3) Պատրաստել ռետինե կաղապար 4) Կատարել ծուլամոմի սրսկում և մոմի մանրակներից ձուլածառի հավաքում 5) Կատարել ծուլամոմի գիպսե կաղապարում 6) Կատարել գիպսե կաղապարի ջերմային մշակում 7) Կատարել ձուլում

Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կարողանալ ներկայացնել կաղապարման և ծուլման եղանակով մանրակների պատրաստման համար օգտագործվող նյութերը
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում ռետինե կաղապարի պատրաստման համար կիրառվող ռետինի տեսակները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում ծուլամոմի տեսակները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում գիպսե կաղապարման համար կիրառվող գիպսի տեսակները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի միջոցով:Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները :</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>ա/ ռետինի տեսակները</p> <ul style="list-style-type: none"> - սիլիկոնային ռետին - ոչ սիլիկոնային ռետին - կոշտ ռետին <p>բ/ ծուլամոմի տեսակները</p> <ul style="list-style-type: none"> - կոշտ - փափուկ <p>գ/ գիպսի տեսակները</p> <ul style="list-style-type: none"> - վակուումային - կենտրոնախույս <p>Արդյունքի յուրացումը բավարար է գնահատվում, եթե առաջադրված հարցերին պատասխանելիս ուսանողը ցուցաբերում է տեղեկացվածություն, կարողանում է գրագետ շարադրել պատասխանները: Առանձին բացթողումները</p>

	կամ վրիպակները չեն կարող ազդել գնահատման վրա:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական պարապմունքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական ու տեղեկատու գրականություն, նորմատիվ փաստաթղթեր, ցուցադրական նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Տարբերակել կաղապարման և ձուլման եղանակով ոսկերչական նախաշինվածքի մանրակների պատրաստման համար կիրառվող սարքավորումները, գործիքներն ու հարմարանքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ռետինե կաղապարի պատրաստման համար անհրաժեշտ սարքը, գործիքները և հարմարանքները, 2) ճիշտ է ներկայացնում ձուլամոմի սրսկման համար նախատեսված սարքը և օժանդակ հարմարանքները, 3) ճիշտ է ներկայացնում գիպսե կաղապարման և ձուլման համար նախատեսված սարքերը, գործիքները, հարմարանքները և դրանց աշխատանքային գործընթացը:
Գնահատման միջոցը	Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է ընթացիկ քննարկումների և ցուցադրման հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է ներկայացնել գործընթացի համար անհրաժեշտ գործիքներն ու սարքավորումները: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. <ul style="list-style-type: none"> - Ռետինե կաղապարի ստացման սարքը, դրա աշխատանքի սկզբունքը և ռեժիմները, - ձուլամոմի սրսկման սարքը, դրա աշխատանքի սկզբունքը և ռեժիմները, - գիպսի կաղապարման սարքը, դրա աշխատանքի սկզբունքը և ռեժիմները, - ձուլման համար նախատեսված սարքը, դրա աշխատանքի սկզբունքը և ռեժիմները: Արդյունքի յուրացումը բավարար է գնահատվում, եթե առաջադրված հարցերին պատասխանելիս ուսանողը ցուցաբերում է տեղեկացվածություն, կարողանում է գրագետ շարադրել պատասխանները: Առանձին բացթողումները կամ վրիպակները չեն կարող ազդել գնահատման վրա:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական ուսուցման միջոցով՝ գործնական ցուցադրման տարրերով: Եպատակահարմար է ուսուցումն անցկացնել անհրաժեշտ կահավորում ունեցող ոսկերչական արհեստանոցում,անհրաժեշտ են կաղապարման ու ձուլման գործիքներ, սարքավորումներ, օժանդակ հարմարանքներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 1 ժամ գործնական աշխատանք 2 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Պատրաստել ռետինե կաղապար
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է տեղադրում առաջնային նմուշը և հում ռետինը ռետինե կաղապար եփելու հարմարանքի մեջ, 2) ճիշտ է ընտրում ռետինե կաղապար եփելու սարքի ջերմային և ուժային ռեժիմները, 3) ճիշտ է պահպանում ռետինի եփման համար անհրաժեշտ ժամանակը, 4) ճիշտ է կտրում ռետինե կաղապարը, 5) գործողությունները կատարվում են անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջներին համապատասխան:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական առաջադրանքի ու դրա արդյունքների ներկայացման հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է պատրաստել տարբեր բարդության 3 ռետինե կաղապար:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - Ռետինե կաղապարի մեջ առաջնային նմուշի տեղադրման ձևերը, - ռետինե կաղապարի եփելու սարքի ջերմային, ուժային, ժամանակին ռեժիմները, ընտրության մեթոդները, - ռետինի կտրման դանակների տեսակները, կտրման ձևերը, կիրառումը: <p>Արդյունքի յուրացումը դրական է, եթե առաջադրանքը կատարվում է ճիշտ և որակով, աննշան թերացումները չեն կարող ազդել գնահատականի վրա:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական ուսուցման միջոցով: Ուսուցումը իրականացվում է անհրաժեշտ կահավորում ունեցող ոսկերչական արհեստանոցում, անհրաժեշտ են ռետին եփելու հարմարանքներ, այն եփելու

	սարք, կտրելու պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 1 ժամ գործնական աշխատանք 2 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Կատարել ձուլամոմի սրկում և մոմի մանրակներից ձուլածառի հավաքում
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ընտրում ձուլամոմի սրկման սարքի աշխատանքային ռեժիմը, 2) ճիշտ է կատարում ձուլամոմի սրկումը ռետինե կաղապարի մեջ, 3) ձուլամոմի մանրակներից ճիշտ հերթականությամբ և ձևով է հավաքում ձուլածառը:
Գնահատման միջոցը	Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական առաջադրանքի ու դրա արդյունքների ներկայացման հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է սրկել և հավաքել ձուլածառ : Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. - Ձուլամոմի սրկման սարքը , դրա աշխատանքային ռեժիմները, դրա վարա աշխատելու կարգը, - ձուլածառի հավաքման հերթականությունը: Արդյունքի յուրացումը դրական է, եթե առաջադրանքը կատարվում է ճիշտ և որակով, աննշան թերացումները չեն կարող ազդել գնահատականի վրա:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական ուսուցման միջոցով: Ուսուցումն իրականացվում է անհրաժեշտ կահավորում ունեցող ոսկերչական արհեստանոցում, անհրաժեշտ են ձուլամոմի սրկման սարք, ձուլակաղապարներ, ձուլածառ հավաքելու համար անհրաժեշտ պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք 4 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Կատարել ձուլամոմի գիպսե կաղապարում
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է կատարում ձուլամոմի տեղադրումը կաղապարի մեջ, 2) ճիշտ է ընտրում գիպսի և քրի խառնուրդի չափաքանակը,

	<p>3) ճիշտ է կատարում գիպսի շաղախման գործողությունը,</p> <p>4) ճիշտ ժամանակին է լցնում պատրաստված շաղախը կաղապարի մեջ:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական առաջադրանքի ու դրա արդյունքների ներկայացման հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է պատրաստել 2 տեսակի գիպսե կաղապար :</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - Գիպսերի տեսակներ, դրանց շաղախների մեջ ջրի և գիպսի չափաբաժինները հաշվարկումը, - շաղախման պրոցեսի հաջորդականությունը, շաղախի պատրաստման ձևը: <p>Արդյունքի յուրացումը դրական է, եթե առաջադրանքը կատարվում է ճիշտ և որակով, աննշան թերացումները չեն կարող ազդել գնահատականի վրա</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական ուսուցման միջոցով: Ուսուցումը իրականացվում է անհրաժեշտ կահավորում ունեցող ոսկերչական արհեստանոցում, անհրաժեշտ են կաղապարման պրոցեսը կատարելու անհրաժեշտ պարագաներ՝ գիպս ծուլամոմերի, կաղապարների նմուշներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 6	Կատարել գիպսե կաղապարի ջերմային մշակում
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ընտրում մուֆելային վառարանում գիպսե կաղապարի թրծելու ջերմային ռեժիմը,</p> <p>2) գիպսե կաղապարը ճիշտ է տեղադրում մուֆելային վառարանի մեջ:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական առաջադրանքի ու դրա արդյունքների ներկայացման հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել գիպսե կաղապարի ջերմային մշակում՝ ընտրելով համապատասխան ջերմային ռեժիմը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - Մուֆելային վառարանների տեսակներն ու դրանց աշխատանքի սկզբունքը,

	<ul style="list-style-type: none"> - թրծման ռեժիմները, կատարման եղանակը, - մուֆելային վառարանում գիպսե կաղապարի տեղադրման ձևերը: <p>Արդյունքի յուրացումը դրական է, եթե առաջադրանքը կատարվում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական ուսուցման միջոցով: Ուսուցումը իրականացվում է անհրաժեշտ կահավորում ունեցող ոսկերչական արհեստանոցում, անհրաժեշտ են մուֆելային վառարան, գիպսե կաղապարներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 7	Կատարել ձուլում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է կատարում թրծված գիպսե կաղապարի տեղադրումը ձուլման սարքի վրա, 2) հանձնարարված եղանակով ճիշտ է կատարում ձուլման գործընթացը, 3) գործողությունները կատարվում են անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջներին համապատասխան:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական առաջադրանքի ու դրա արդյունքների ներկայացման հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել տարբեր եղանակներով մեկական ձուլում:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - Ձուլման սարքն ու դրա աշխատանքի սկզբունքը, - ձուլման սարքում գիպսե կաղապարի տեղադրման սկզբունքը, - ձուլում կատարելու հմտությունները: <p>Արդյունքի յուրացումը դրական է, եթե առաջադրանքը կատարվում է ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական ուսուցման միջոցով : Ուսուցումը իրականացվում է անհրաժեշտ կահավորում ունեցող ոսկերչական արհեստանոցում, անհրաժեշտ են ձուլման սարք, գործընթացի համար անհրաժեշտ գործիքներ և սարքավորումներ:
Ուսուցման երաշխավորված	տեսական ուսուցում՝ 2 ժամ

Ժամաքանակը	գործնական աշխատանք 4 ժամ
Մ Ո Դ Ռ Ի Լ Ի Ա Ն Վ Ա Ն Ո Ւ Մ Ը <<ՈՍԿԵՐԶԱԿԱՆ ՇԻՆՎԱԾՔԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ: ՄԱՆՐԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՀՅՈՒՍՎԱԾՔԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ (ՖԻԼԻԳՐԱՆ) ԵՂԱՆԱԿՈՎ>>	
Մոդուլի դասիչը	ՈՍԿ 3-014-010
Մոդուլի նպատակը	Ուսանողի մոտ ձևավորել հյուսվածքային տեխնիկայի եղանակով ոսկերչական իրի մանրակներ պատրաստելու կարողություն:
Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 28 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈՍԿ 3-14-001 <<Մասնագիտության ներածություն և նյութագիտություն>>, ՈՍԿ 3-14-004 <<Ոսկերչական իրի համար նախատեսված համաձուլվածքի պատրաստում>>, ՈՍԿ 3-14-005 <<Ոսկերչական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ: Նախապատրաստուկների ստացում գլոցման և լարածգման եղանակով>> մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	1) Տարբերակել հյուսվածքային տեխնիկայի տեսակները, գործիքները և հարմարանքները 2) Ըստ աշխատանքային էսքիզի կամ գծագրի պատրաստել մետաղական մանրաթելի հյուսվածքներով նախապատրաստուկներ 3) Պատրաստել մանրակների կոնտուրները, կատարել կոնտուրների լցոնում՝ հյուսված մանրաթելով 4) Պատրաստել մետաղական գնդիկներ
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Տարբերակել հյուսվածքային տեխնիկայի տեսակները, գործիքները և հարմարանքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հյուսվածքային տեխնիկայի տեսակները,

	2) ճիշտ է տարբերակում հյուսվածքային տեխնիկայում օգտագործվող գործիքները և հարմարանքները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի հիման վրա:</p> <p>Արդյունքի ուուման ծրագրային մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> - Հյուսվածքային տեխնիկայի կիրառական տեսակները, - հյուսվածքային տեխնիկայում օգտագործվող գործիքների տեսականեր, օգտագործման ձևը: <p>Ստորև ներկայացվում է հյուսվածքային տեխնիկայի տեսակները.</p> <ul style="list-style-type: none"> - ցանցային - ֆոնային <p>Արդյունքի յուրացումը բավարար է գնահատվում, եթե առաջադրված հարցերին պատասխանելիս ուսանողը ցուցաբերում է տեղեկացվածություն, կարողանում է գրագետ շարադրել պատասխանները: Առանձին բացթողումները կամ վրիպակները չեն կարող ազդել գնահատման վրա:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական ուսուցման միջոցով: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ գծագրական և նկարչական պարագաներ, մասնագիտական գրականություն և ցուցադրական նմուշներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	Ըստ աշխատանքային էսքիզի կամ գծագրի պատրաստել մետաղական մանրաթելի հյուսվածքներով նախապատրաստուկներ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ընտրում մետաղական մանրաթելից հյուսվածք պատրաստելու հարմարանքները, գործիքները, 2) ճիշտ է ընտրում տեխնիկական քարտում նշված մետաղական լարերը և պրոֆիլները, 3) ճիշտ է կատարում մետաղական մանրաթելի ջերմային մշակումը, 4) ճիշտ է կատարում մանրաթելով հյուսվածք պատրաստելու գործողությունը, 5) չափիչ գործիքով ստուգում է ստացված մանրաթելերի չափսերը և պրոֆիլները,

	<p>6) աշխատանքի կատարման ժամանակ կորուստները թույլատրելի սահմաններում են,</p> <p>7) ճիշտ է կատարում մանրաթելերի զոդումը,</p> <p>8) գործողությունները կատարվում են անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջներին համապատասխան:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական առաջադրանքի ու դրա արդյունքների ներկայացման հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է ոչ պակաս 4 ձևի հյուսվածքաթելի նախապատրաստուկներ՝ ըստ տեխնիկական քարտի պահանջների:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - Մետաղական մանրաթելից հյուսվածք պատրաստելու հարմարանքները, գործիքները, դրանցով աշխատելու հմտությունները, - մանրաթելի ջերմային մշակման մեթոդները, իրականացման ձևերը, - ստացված մանրաթելերի պրոֆիլների և չափսերի չափումը և գծագրին համապատասխանության ստուգումը: <p>Արդյունքի յուրացումը դրական է, եթե առաջադրանքը կատարվում է ճիշտ, որակով և գեղեցիկ, աննշան թերացումները չեն կարող ազդել գնահատականի վրա:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական ուսուցման միջոցով: Ուսուցումը իրականացվում է անհրաժեշտ կահավորում ունեցող ոսկերչական արհեստանոցում, անհրաժեշտ են տարբեր չափսերի մանրաթելերի նմուշներ, մասնագիտական գրականություն, ցուցադրական նմուշներ, չափիչ գործիքներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Պատրաստել մանրակների կոնտուրները, կատարել կոնտուրների լցոնում՝ հյուսված մանրաթելով</p>
Կատարման չափանիշներ	<p>1) ըստ աշխատանքային էսքիզի՝ ճիշտ է կատարում մանրակների կոնտուրների ծոում՝ համապատասխան ձևերով,</p> <p>2) ճիշտ է կատարում կոնտուրների զոդումը,</p> <p>3) ճիշտ է կատարում կոնտուրների լցոնումը հյուսվածքաթելով,</p>

	<p>4) ճիշտ է կատարում կոնտուրների և լցոնվածքի միազոդման գործողությունը,</p> <p>5) չափիչ գործիքով կատարում է չափումներ,</p> <p>6) աշխատանքի կատարման ժամանակ կորուստները թույլատրելի սահմաններում են,</p> <p>7) գործողությունները կատարվում են անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջներին համապատասխան:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական առաջադրանքի ու դրա արդյունքների ներկայացման հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է ըստ աշխատանքային էսքիզի պատրաստել ոչ պակաս քան 5 ձևի մանրակ՝ լցոնված հյուսվածքաթելով:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - կոնտուրների ծռման հմտությունները՝ ըստ էսքիզի, - կոնտուրների զոդման հմտությունները, - հյուսվածքաթելով լցոնումների ձևերը, կատարման հմտությունները: <p>Արդյունքի յուրացումը դրական է, եթե առաջադրանքը կատարվում է ճիշտ, որակով և գեղեցիկ, աննշան թերացումները չեն կարող ազդել գնահատականի վրա:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական ուսուցման միջոցով: Ուսուցումը իրականացվում է անհրաժեշտ կահավորում ունեցող ոսկերչական արհեստանոցում, անհրաժեշտ են մանրակների պատրաստման գործիքներ, ցուցադրական նյութեր, աշխատանքային էսքիզների օրինակներ, չափիչ գործիքներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	Պատրաստել մետաղական գնդիկներ
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում մետաղական գնդիկներ պատրաստելու համար անհրաժեշտ գործիքները և հարմարանքները,</p> <p>2) ճիշտ է ընտրում գնդիկներ պատրաստելու համար մետաղական լարի չափսերը,</p>

	<p>3) մետաղական լարը ճիշտ է բաժանում չափամասերի՝ ապահովելով գնդիկի անհրաժեշտ տրամագծի և քաշի ստացումը,</p> <p>4) ճիշտ է կատարում գնդիկ պատրաստելու գործողությունը՝ չափերը համապատասխանում են գծագրին,</p> <p>5) աշխատանքի կատարման ժամանակ կորուստները թույլատրելիի սահմաններում են,</p> <p>6) գործողությունները կատարվում են անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջներին համապատասխան:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական առաջադրանքի ու դրա արդյունքների ներկայացման հիման վրա: ՌԽսանողին հանձնարարվելու է ըստ գծագրի պատրաստել տարբեր չափսերի 5 ական գնդիկ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - Մետաղական լարից գնդիկի ստացման համար մետաղական լարի չափսերի հաշվարկումը, - գնդիկների ստացման հմտությունները, - գնդիկների ստացված չափսի և գծագրին համապատասխանության ստուգումը: <p>Արդյունքի յուրացումը դրական է, եթե առաջադրանքը կատարվում է ճիշտ , չափսերը ստացվում են թույլատրելիի սահմաններում: Աննշան թերացումները չեն կարող ազդել գնահատականի վրա:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական ուսուցման միջոցով: Ուսուցումը իրականացվում է անհրաժեշտ կահավորում ունեցող ոսկերչական արհեստանոցում, անհրաժեշտ են գնդիկների պատրաստման գործիքներ, գծագրերի նմուշներ, չափիչ գործիքներ:</p>
ՌԽսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ՇԻՆՎԱԾՔԻ ՀԱՎԱՔՈՒՄ>>	
Մոդուլի դասիչը	ՈՍԿ 3-14-011
Մոդուլի նպատակը	Ուսանողը պետք է կարողանա ներկայացնել ըստ աշխատանքային էսքիզի կամ գծագրի՝ զոդման, հողակապային միացությունների և գամման եղանակով մանրակներից ոսկերչական իր հավաքելու կարողություններ:

Մոդուլի տևողությունը	36 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 28 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈՍԿ 3-14-004 <<Ոսկերչական իրի համար նախատեսված համաձուլվածքի պատրաստում>>, ՈՍԿ 3-14-005 <<Ոսկերչական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ: Նախապատրաստուկների ստացում գլոցման և լարածգման եղանակով>>, ՈՍԿ 3-014-006 <<Ոսկերչական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ: Նախապատրաստուկների և մանրակների պատրաստում փականագործական աշխատանքների եղանակով>>, ՈՍԿ 3-014-007 <<Ոսկերչական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ: Մանրակների պատրաստում դրոշմման եղանակով >>, ՈՍԿ 3-014-009 << Ոսկերչական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ: Մանրակների պատրաստում ձուլման եղանակով >> մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	1) Կատարել հավաքման աշխատանքներ՝ զոդման եղանակով 2) Մանրակից հավաքել ոսկերչական իր՝ հողակապային միացումներով և գամման եղանակով
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կատարել հավաքման աշխատանքներ՝ զոդման եղանակով
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում զոդման եղանակով ոսկերչական իր հավաքելու համար անհրաժեշտ գործիքները և հարմարանքները, 2) ըստ աշխատանքային էքզիզի ճիշտ է տեղադրում ոսկերչական իրի մանրակները՝ ըստ դրանց զոդման հերթականության, 3) ճիշտ է ընտրում զոդման համար անհրաժեշտ տեսակի և հարզի զոդանյութը, 4) ճիշտ է կատարում շինվածքի զոդման գործողությունը,

	<p>5) ճիշտ է կատարում զոդված շինվածքի մաքրումը քիմիական նյութերով (սպիտակեցում),</p> <p>6) շինվածքի զոդված մասերը ունեն հուսալի ամրություն,</p> <p>7) շինվածքը համապատասխանում է գծագրին, չափսերը ճշգրիտ են,</p> <p>8) գործողությունները կատարվում են անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջներին համապատասխան:</p>
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական առաջադրանքի ու դրա արդյունքների ներկայացման հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է ըստ գծագրի պատրաստել 5 տարբեր շինվածքներ:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - Ոսկերչական իրի մանրակների զոդման հերթականությունը, - զոդումների կատարման հմտությունները, - զոդանյութերի ընտրությունը՝ համապատասխան կոնկետ առաջադրանքին, - շինվածքի մաքրման քիմիական լուծույթների ստացումը, դրանց քիմիական նշանակումը, պատրաստման եղանակը: <p>Արդյունքի յուրացումը դրական է, եթե առաջադրանքը կատարվում է ճիշտ , չափսերը ստացվում են թույլատրելի սահմաններում, աշխատանքը կատարված է կոկիկ և հուսալի: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը բոլոր աշխատանքները կատարում է ճիշտ 90 տոկոսով:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքերի միջոցով: Արդյունքի ուսուցումը իրականացվում է ոսկերչական արհեստանոցում: Անհրաժեշտ է ունենալ ոսկերչական սեղան իր բոլոր պարագաներով, գծագրերի և աշխատանքային էսքիզների նմուշներ, չափիչ գործիքներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 14 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 2</p>	<p>Մանրակից հավաքել ոսկերչական իր՝ հողակապային միացումներով և գամման եղանակով</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) ճիշտ է տարբերակում հողակապային և գամման եղանակով ոսկերչական իրի հավաքման համար անհրաժեշտ</p>

	<p>գործիքները և հարմարանքները,</p> <p>2) ըստ աշխատանքային էքսիզի ճիշտ է կատարում հողակապային համադրումը, ճիշտ է ընտրում հողակապերի միացման համար անհրաժեշտ չափի և ամրության ձողերը,</p> <p>3) ճիշտ է կատարում հողակապային ձողերի գամման գործողությունը,</p> <p>4) հողակապային միացությունները ունեն անհրաժեշտ շարժունակություն և հուսալի ամրություն,</p> <p>5) հավաքված շինվածքը համապատասխանում է աշխատանքային էքսիզին կամ գծագրին,</p> <p>6) գործողությունները կատարվում են անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջներին համապատասխան,</p> <p>7) աշխատանքի կատարման ժամանակ կորուստները թույլատրելի սահմաններում են:</p>
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական առաջադրանքի ու դրա արդյունքների ներկայացման հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է ըստ գծագրի կամ էքսիզի պատրաստել 5 տարբեր բարդության ոսկերչական իր:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - Հողակապայի ու գամմային ամրացումների համար անհրաժեշտ գործիքների տեսակները, կիրառման հմտությունները, - հողակապերի և գամերի տեսակներ, ստանդարտ չափերը, - հողակապային և գամմային ամրացումների հուսալիության ստուգման ձևերը: <p>Արդյունքի յուրացումը դրական է, եթե առաջադրանքը կատարվում է ճիշտ , չափերը ստացվում են թույլատրելի սահմաններում, աշխատանքը կատարված է կոկիկ և հուսալի, ապահովված է իրի շարժունակությունը: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը բոլոր աշխատանքները կատարում է ճիշտ 90 տոկոսով:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով: Արդյունքի ուսուցումը իրականացվում է ոսկերչական արհեստանոցում: Անհրաժեշտ է ունենալ ոսկերչական սեղան իր բոլոր պարագաներով, գծագրերի և աշխատանքային էքսիզների նմուշներ, չափիչ գործիքներ:</p>

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 14 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԻՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՄՇԱԿՈՒՄ>>	
Մոդուլի դասիչը	ՈՍԿ 3-14-012
Մոդուլի նպատակը	Ուսանողը պետք է կարողանա ներկայացնել ոսկերչական իրի հավաքման աշխատանքներից առաջացած ավելորդությունների վերացման և գամված, զոդվածտեղերի մշակման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	24 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 18 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈՍԿ 3-14-001 <<Մասնագիտության ներածություն և նյութագիտություն>>, ՈՍԿ3-014-006 <<Ոսկերչական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ: Նախապատրաստուկների և մանրակների պատրաստում փականագործական աշխատանքների եղանակով >> մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	1) Կարողանալ ներկայացնել ընթացիկ մշակման համար անհրաժեշտ գործիքները, հարմարանքները 2) Կատարել ընթացիկ մշակման գործողություն
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կարողանալ ներկայացնել ընթացիկ մշակման համար անհրաժեշտ գործիքները, հարմարանքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ընթացիկ մշակման համար անհրաժեշտ գործիքները և հարմարանքները, 2) ճիշտ է ընտրում տվյալ իրի ընթացիկ մշակման համար անհրաժեշտ մանրախարտոցների տեսակները, ռետինե սկավառակային հղկիչները, հղկաթղթի տեսակները: 3) ստուգվում է հանգույցների համապատասխանությունը գծագրին:

<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական հանձնարարության հիման վրա: Ուսանողը պետք է իրավիճակին համապատասխան ընտրի գործիքները և հարմարանքները, հիմնավորի ընտրությունը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - Մանրախարոցների տեսակները, - Ռետինե սկավառակների տեսակները, - Հղկաթղթերի տեսակներ <p>Արդյունքի յուրացումը բավարար է գնահատվում, եթե առաջադրված հարցերին պատասխանելիս ուսանողը ցուցաբերում է տեղեկացվածություն, կարողանում է գրագետ շարադրել պատասխանները: Առանձին բացթողումները կամ վրիպակները չեն կարող ազդել գնահատման վրա:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքերի միջոցով: Արդյունքի ուսուցումը իրականացվում է ոսկերչական արհեստանոցում: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան գրականություն, ցուցադրական նյութեր, գործիքներ, հարմարանքներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 2</p>	<p>Կատարել ընթացիկ մշակման գործողություն</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է կատարում ընթացիկ մշակման գործողությունը՝ պահպանելով ոսկերչական իրի արտաքին տեսքն՝ ըստ էսքիզի, 2) գամված և զոդված տեղերն աննկատ են, 3) աշխատանքի կատարման ժամանակ կորուստները թույլատրելիի սահմաններում են, 4) գործողությունները կատարվում են անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջներին համապատասխան:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական առաջադրանքի ու դրա արդյունքների ներկայացման հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել առնվազն 5 տարբեր իրերի ընթացիկ մշակում:</p>

	Արդյունքի յուրացումը դրական է, եթե առաջադրանքը կատարվում է ճիշտ , իրերըը համապատասխան են էսքիզին, ունեն ապրանքային տեսք: Արդյունքի յուրացումը դրական է համարվում, եթե ուսանողը բոլոր աշխատանքները կատարում է ճիշտ 90 տոկոսով:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքերի միջոցով: Արդյունքի ուսուցումը իրականացվում է ոսկերչական արհեստանոցում: Անհրաժեշտ է ունենալ ոսկերչական սեղան իր բոլոր պարագաներով, չափիչ գործիքներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԻՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՆԱԽՇԱԶԱՐԴՈՒՄ, ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՄԱՔՐՈՒՄ, ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒՄ, ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄ>>	
Մոդուլի դասիչը	ՈՍԿ 3-14-013
Մոդուլի նպատակը	Ուսանողը պետք է կարողանա կատարել ոսկերչական շինվածքի վերջնական մշակում և նախշազարդում, աշխատատեղի մաքրում, գործիքների դասավորում, կատարված աշխատանքի հանձնում:
Մոդուլի տևողությունը	24 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 18 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈՍԿ 3-14-004 <<Ոսկերչական իրի համար նախատեսված համաձուլվածքի պատրաստում>>, ՈՍԿ 3-14-005 <<Ոսկերչական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ: Նախապատրաստուկների ստացում գլոցման և լարածգման եղանակով>>, ՈՍԿ 3-014-006 <<Ոսկերչական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ: Նախապատրաստուկների և մանրակների պատրաստում փականագործական աշխատանքների եղանակով>>, ՈՍԿ 3-014-007 <<Ոսկերչական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ: Մանրակների պատրաստում դրոշմման եղանակով >>, ՈՍԿ 3-

	014-009 <<Ոսկերչական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ: Մանրակների պատրաստում ձուլման եղանակով>> մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	<ol style="list-style-type: none"> 1) Կատարել շինվածքի փայլեցում, մաքրում և լվացում 2) Ըստ աշխատանքային էսքիզի կատարել նախշագարդման աշխատանքներ՝ փորագրման և դրվագման եղանակներով 3) Հավաքել արտահագուստի և ձեռքերի վրա մնացած թանկարժեք մետաղի փոշին, աշխատասեղանի վրա թափված թանկարժեք մետաղի խարտվածքը և կտորտանքը 4) Վերածել թանկարժեք մետաղի խարտվածքը և կտորտանքը ձուլակտորի 5) Կշռել ստացված ձուլակտորը պատրաստված շինվածքի հետ, հանձնել և կատարել գրանցում, հարգորոշում
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կատարել շինվածքի փայլեցում, մաքրում և լվացում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում փայլեցման համար անհրաժեշտ գործիքները, սարքավորումները, օժանդակ հարմարանքները, փայլեցնող քսուկները, էլեկտրաքիմիական փայլեցման համար նախատեսված էլեկտրոլիզի անհրաժեշտ նյութերը, 2) ճիշտ է կատարում փայլեցման գործողությունը մեխանիկական և էլեկտրաքիմիական եղանակներով, 3) ճիշտ է կատարում փայլեցումից հետո շինվածքի արտաքին մակերեսին մնացած փայլեցնող քսուկներից շինվածքի մաքրման և գերձայնային լվացման գործողությունները, 4) ճիշտ է չորացնում փայլեցված և լվացված շինվածքը, 5) աշխատանքի կատարման ժամանակ կորուստները թույլատրելի սահմաններում են:
Գնահատման միջոցը	Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական առաջադրանքի ու դրա արդյունքների ներկայացման հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է փայլեցնել, մաքրել և լվանալ տարբեր եղանակներով պատրաստված 5 հատ իր:

	<p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - Փայլեցման սարքերը դրանց աշխատանքի սկզբունքը, - փայլեցման քսուկները, էլեկտրոլիզի նյութերը, - գերձայնային լվացման սարքը և դրա աշխատանքի սկզբունքը, - չորացման սարքը և դրա աշխատանքի սկզբունքը: <p>Արդյունքի յուրացումը դրական է, եթե առաջադրանքը կատարվում է ճիշտ, ապահովված է իրերի ապրանքային տեսքը:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների միջոցով: Արդյունքի ուսուցումը իրականացվում է ոսկերչական արհեստանոցում: Անհրաժեշտ է ունենալ փայլեցման, լվացման և չորացման սարքավորումներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 2</p>	<p>Ըստ աշխատանքային էսքիզի կատարել նախշազարդման աշխատանքներ՝ փորագրման և դրվագման եղանակներով</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում փորագրման և դրվագման եղանակները, 2) ճիշտ է ներկայացնում փորագրման և դրվագման համար անհրաժեշտ գործիքները, հարմարանքներն ու օժանդակ նյութերը, 3) ըստ աշխատանքային էսքիզի ճիշտ է կատարում փորագրման և դրվագման գործողությունը, 4) կատարված նախշազարդերը նրբարվեստ են, 5) գործողությունները կատարվում են անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջներին համապատասխան, 6) խուսափում է թանկարժեք մետաղների կորուստներից:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանք կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել նախշազարդման տարբեր բարդության 3 աշխատանք՝ փորագրման և դրվագման եղանակներով:</p>

	<p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <p>Փորագրման եղանակները.</p> <ul style="list-style-type: none"> - գրաֆիկական փորագրություն, կատարման հմտությունները, - զարդանախշային փորագրություն, կատարման հմտությունները: <p>Արդյունքը բավարար է, եթե գործողությունը կատարվում է 90 տոկոսով ճիշտ:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների միջոցով: Արդյունքի ուսուցումը իրականացվում է ոսկերչական արհեստանոցում: Անհրաժեշտ է ունենալ դրվագման գործիքներ, աշխատանքային էսքիզների , գրաֆիկական և նկարչական շաբլոնների նմուշներ, ցուցադրական նյութեր:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 1 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 3</p>	<p>Հավաքել արտահագուստի և ձեռքերի վրա մնացած թանկարժեք մետաղի փոշին, աշխատասեղանի վրա թափված թանկարժեք մետաղի խարտվածքը և կտորտանքը</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) ճիշտ է ընտրում արտահագուստը, ձեռքերը, գործիքները մաքրելու համար նախատեսված խոզանակները,</p> <p>2) հնարավորիս անկորուստ է հավաքում թանկարժեք մետաղի խարտվածքը և կտորտանքը:</p>
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումը կատարվում է հարց ու պատասխանի միջոցով, որի ընթացքում ուսանողը պետք է ներկայացնի աշխատատեղի հավաքման հիմնական գործողությունները, հիմնավորի արտահագուստի, ձեռնոցների, մաքրման խոզանակների ընտրությունը:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - Արտահագուստի, ձեռնոցների տեսակները, դրանց ընտրության հիմնավորումը, - կոնկրետ իրավիճակներում արտահագուստների կրման անհարժեշտությունը, - խոզանակների տեսակները, և թանկարժեք մետաղի խարտվածքի հավաքման պիտույքները: <p>Արդյունքի յուրացումը դրական է, եթե պատասխանները հիմնավոր են:</p>

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ աշխատատեղի հավաքման վերաբերյալ հրահանգներ և կարգեր, ցուցադրական նյութեր , հնարավորության սահմաններում գործառույթը ցուցադրել ֆիլմի տեսքով :
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 1 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Վերածել թանկարժեք մետաղի խարտվածքը և կտորտանքը ձուլակտորի
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ընտրում թանկարժեք մետաղի խարտվածքը և կտորտանքը ձուլակտորի վերածելու համար անհրաժեշտ նյութերը և հարմարանքները, 2) ճիշտ է կատարում ձուլակտորի ստացման գործողությունը, 3) գործողությունները կատարվում են անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջներին համապատասխան, 4) աշխատասեղանը մաքուր է, աշխատանքային գործիքները դասավորված:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական առաջադրանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կոնկրետ առաջադրված խարտվածքից ստանալ ձուլակտոր:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.</p> <ul style="list-style-type: none"> - ձուլակտորի ստացման գործողությունների հաջորդականությունը, - աշխատասեղանի և գործիքների դասավորվածության նկարագիրը: <p>Արդյունքի յուրացումը դրական է, եթե գործողությունները կատարվում են ճիշտ, աննշան թերությունները չեն կարող ազդել գնահատականի վրա:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների միջոցով՝ ոսկերչական արհեստանոցում: Անհրաժեշտ է ունենալ խարտվածքը ձուլակտորի վերածելու համար անհրաժեշտ նյութերը և հարմարանքները:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 1 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ

Ուսումնառության արդյունք 5	Կշռել ստացված ձուլակտորը պատրաստված շինվածքի հետ, հանձնել և կատարել գրանցում, հարգորոշում
Կատարման չափանիշներ	<p>1) պատրաստված ոսկերչական իրի և ավելացած ձուլակտորի քաշը և հարգանիշը համապատասխանում է գրանցումով ստացած թանկարժեք մետաղի քաշին և հարգանիշին՝ հաշվի առնելով քաշի կորստի թույլատրելի նորման,</p> <p>2) կատարված է պատրաստված ոսկերչական իրի և ավելցուկի հանձնման և ընդունման գրանցում,</p> <p>3) կատարել ստացված իրի և ավելացած ձուլակտորի հարգորոշում և արդյունքների վերլուծություն:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կշռել ստացված ձուլակտորը և կատարել համապատասխան ստուգումներ, ու գրանցումներ, կատարել ստացված իրի և ավելացած ձուլակտորի հարգորոշում և արդյունքների վերլուծություն :</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - Ստացված իրի քաշի և հարգանիշի համապատասխանությունը տեսական հաշվարկին, - ընդունման և հանձնման գրանցումների կատարուման կարգը , - հարգորոշման քարի վրա հարգորոշման կատարման գործողությունները: <p>Արդյունքը բավարար է, եթե առաջադրանքը կատարվում է բացարձակ ճիշտ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների միջոցով՝ ոսկերչական արհեստանոցում:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ ոսկերչական կշեռք, հարգորոշման քար և հակազդուկներ, գրանցման, ընդունման և հանձնման բլանկների ձևանմուշներ, հարգերի վերաբերյալ նորմատիվային փաստաթղթեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 1 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 2 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ՔԱՐԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ>>	
Մոդուլի դասիչը	ՈՍԿ 3-08-014
Մոդուլի նպատակը	Ուսանողը պետք է կարողանա ներկայացնել ոսկերչական քարերի տեսակները, և կարողանա կատարել ոսկերչական

	քարերի տեղադրելում:
Մոդուլի տևողությունը	24 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 18 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈՍԿ 3-08-001 <<Մասնագիտության ներածություն և նյութագիտություն>>, ՈՍԿ 3-08-002 <<Գծագրություն և եռաչափ կառուցումներ>> մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	1) Կարողանալ ներկայացնել թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի տեսակները, դրանց քիմիական և մեխանիկական հատկությունները, ծագումը 2) Ներկայացնել ոսկերչական քարերի ամրացման համար նախատեսված ագուցների տեսակներն ըստ ոսկերչական քարերի տաշվածքի, դրանց ամրացման ձևերը 3) Ճանաչել ագուցների պատրաստման և մշակման, քարերի ամրացման համար անհրաժեշտ գործիքները, հարմարանքները և օժանդակ նյութերը 4) Կատարել ագուցների մշակում, քարերի տեղադրում ըստ աշխատանքային էսքիզի և քարերի ամրացում
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կարողանալ ներկայացնել թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի տեսակները, դրանց քիմիական և մեխանիկական հատկությունները, ծագումը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ոսկերչական քարերի տեսակները, դրանց դասակարգումը և կարծրության աստիճանը, տաշման ձևը, 2) ճիշտ է ներկայացնում թթուների և բարձր ջերմաստիճանների ազդեցությունը տարբեր ենթախմբի ոսկերչական քարերի վրա, 3) ճիշտ է ներկայացնում քարերի ստանդարտ չափսերը, ձևերը, տաշվածքները:

<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի հիման վրա:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են՝</p> <p>ա/ ոսկերչական քարերի տեսակները</p> <ul style="list-style-type: none"> - թանկարժեք - կիսաթանկարժեք - արհեստական <p>բ/ ոսկերչական քարերի էական հատկությունները</p> <ul style="list-style-type: none"> - ջերմադիմացկանությունը - կարծրությունը - քիմիական նյութերի նկատմամբ կայունությունը <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ պատասխան է տրվում, աննշան թերացումները չեն կարող ազդել գնահատականի վրա :</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, ցուցադրական նյութեր, քարերի տաշվածքների գրաֆիկական պատկերների նմուշներ, գծագրեր, քարերի նմուշներ: Հնարավորության սահմաններում ցանկալի է անցկացնել մասնագիտական ֆիլմերի ցուցադրություններ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 1 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 2</p>	<p>Ներկայացնել ոսկերչական քարերի ամրացման համար նախատեսված ազուցների տեսակներն ըստ ոսկերչական քարերի տաշվածքի, դրանց ամրացման ձևերը</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) ճիշտ է ներկայացնում ոսկերչական քարերի ամրացման համար նախատեսված ազուցների տեսակները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում ազուցը և ամրացման եղանակն՝ ըստ ոսկերչական քարերի տաշվածքի և գծագրի:</p>

<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի հիման վրա:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - Ագուցների տեսակները ու ամրացման եղանակները, կատարման գործողությունները, - ոսկերչական քարերի տաշվածքները <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե հարցերին ընդհանուր առմամբ ճիշտ պատասխան է տրվում, պատասխանները հիմնավոր են և տրամաբանված:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, ցուցադրական նյութեր, ագուցների տեսակների գրաֆիկական պատկերների նմուշներ, ստանդարտ քարերի տաշվածքների գծագրեր, քարերի տաշվածքների և ստանդարտների վերաբերյալ նորմատիվային փաստաթղթեր:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 1 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 3</p>	<p>Ճանաչել ագուցների պատրաստման և մշակման, քարերի ամրացման համար անհրաժեշտ գործիքները, հարմարանքները և օժանդակ նյութերը</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) ճիշտ է տարբերակում ագուցների մշակման համար անհրաժեշտ գործիքները՝ ելնելով քարերի ամրացման եղանակից,</p> <p>2) ճիշտ է ընտրում անհրաժեշտ հարմարանքները և օժանդակ նյութերը:</p>
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական հանձնարարություն կատարելու հիման վրա: Ուսանողը պետք է հանձնարարականին համապատասխան ընտրի գործիքներ, հարմարանքներ, նյութեր:</p> <p>Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները.</p> <ul style="list-style-type: none"> - Քարամրացման գործիքների տեսակները , դրանց ընտրության հիմնավորումները, - քարամրացման օժանդակ նյութերը, կիրառման գործողությունները:

	Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե հանձնարարությունը կատարվում է ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է տեսական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, ցուցադրական նյութեր, հանձնարարականների նմուշներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Կատարել ազուցների մշակում, քարերի տեղադրում ըստ աշխատանքային էսքիզի և քարերի ամրացում
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է մշակում ազուցները, 2) ճիշտ է կատարում քարերի տեղադրման և ամրացման գործողությունը խուլ ամրացման, կռապանային, պավե եղանակներով, 3) քարերը ամրացված են հուսալի և անվնաս, 4) գործողությունները կատարվում են անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջներին համապատասխան, 5) աշխատանքի կատարման ժամանակ կորուստները թույլատրելի սահմաններում են:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանք կատարելու հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել քարերի տեղադրման և ամրացման աշխատանքներ խուլ ամրացման, կռապանային, պավե եղանակներով: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են. <ul style="list-style-type: none"> - Ազուցների մշակման գործողությունները, դրանց կատարման հերթականությունը, - տարբեր եղանակներով քարամրացումների կատարման հմտությունները, - ամրացված քարերի հուսալիության ստուգման եղանակները: Արդյունքը գնահատվում է բավարար, եթե գործողությունը կատարվում է 90 տոկոսով ճիշտ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքների միջոցով՝ արհեստանոցային պայմաններում: Անհրաժեշտ է ունենալ ազուցների մշակման, քարերի ամրացման գործիքներ, քարերի նմուշներ, մասնագիտական և

	տեղեկատու գրականություն, ցուցադրական նյութեր, քարերի տաշվածքների և տարբեր ամրացումների գրաֆիկական պատկերների նմուշներ: Հնարավորության սահմաններում ցանկալի է անցկացնել մասնագիտական ֆիլմերի ցուցադրություններ՝ գործառույթը ավելի պատկերավոր մատուցելու համար:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ <<ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ>>	
Մոդուլի դասիչը	ՈՍԿ 3-14-015
Մոդուլի նպատակը	Ուսանողը պետք է կարողանա նորոգել վնասված ոսկերչական և ժողովրդական արհեստների գեղարվեստական իրերը:
Մոդուլի տևողությունը	24 ժամ, որից՝ տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք 18 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈՍԿ-3-14-004 <<Ոսկերչական իրի համար նախատեսված համաձուլվածքի պատրաստում>>, ՈՍԿ-3-14-005 <<Ոսկերչական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ: Նախապատրաստուկների ստացում գլոցման և լարածգման եղանակով>>, ՈՍԿ 3-014-006 <<Ոսկերչական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ: Նախապատրաստուկների և մանրակների պատրաստում փականագործական աշխատանքների եղանակով>>, ՈՍԿ 3-014-007 <<Ոսկերչական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ: Մանրակների պատրաստում դրոշմման եղանակով>>, ՈՍԿ 3-014-009 <<Ոսկերչական շինվածքի նախապատրաստական աշխատանքներ: Մանրակների պատրաստում ձուլման եղանակով>> մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	1) Գնահատել ոսկերչական կամ ժողովրդական արվեստների գեղարվեստական իրի նորոգման հնարավորությունը 2) Ընտրել տվյալ իրի նորոգման համար անհրաժեշտ տեխնոլոգիաները

	3) Կատարել նորոգման համար անհրաժեշտ կոմպլեքսային աշխատանքներ
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Գնահատել ոսկերչական կամ ժողովրդական արվեստների գեղարվեստական իրի նորոգման հնարավորությունը
Կատարման չափանիշներ	1) գնահատումը կատարված է ճիշտ, 2) ճիշտ է ձևակերպում նորոգման աշխատանքների վերաբերյալ պատվիրատուի հետ կնքվող համաձայնագիրը, 3) ստուգել նորոգման ենթակա իրի հարգը և քարերի որակը:
Գնահատման միջոցը	Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական առաջադրանքի կատարման հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է գնահատել ոչ պակաս 5 տարբեր իրերի վերանորոգման հնարավորությունը: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. <ul style="list-style-type: none"> - Նորոգման ենթակա իրերի գնահատման եղանակները, - նորոգման ենթակա իրերի համար պատվիրատուի հետ կնքվող համաձայնագրերի ձևերը, դրանց լրացման եղանակը, - նորոգման ենթակա իրերի հարգի և քարերի որակի ստուգման եղանակները: Արդյունքը բավարար է, եթե առաջադրանքը ճիշտ է կատարվում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տարբեր բարդության վերանորոգումներ պահանջող իրերի նմուշներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ընտրել տվյալ իրի նորոգման համար անհրաժեշտ տեխնոլոգիաները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ընտրված նորոգվող իրի համար անհրաժեշտ մետաղի համաձուլվածքը և ոսկերչական քարերը՝ եթե այդպիսիք կան,

	2) ճիշտ է ընտրված նորոգման համար անհրաժեշտ գործողությունները:
Գնահատման միջոցը	Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական առաջադրանքի կատարման հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է առաջադրել ոչ պակաս 5 տարբեր իրերի վերանորոգման տեխնոլոգիան: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները. <ul style="list-style-type: none"> - Իրի նորոգման ռացիոնալ տեխնոլոգիայի ընտրությունը, դրա հիմնավորումը - համապատասխան նյութերի՝ մետաղների, քարերի ընտրությունը: Արդյունքը բավարար է, եթե առաջադրանքը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարվում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ վերանորոգման ենթակա տարբեր տեխնոլոգիաներով պատրաստված իրերի նմուշներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Կատարել նորոգման համար անհրաժեշտ կոմպլեքսային աշխատանքներ
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է կատարված անհրաժեշտ կոմպլեքսային աշխատանքները, 2) նորոգված մասը չի առանձնանում ոսկերչական իրի ընդհանուր տեսքից, 3) նորոգված շարժական կամ զսպանակային մասերը կատարում են իրենց ֆունկցիան, 4) պատվիրատուն գոհ է կատարված աշխատանքից, 5) իրը ունի գեղեցիկ ապրանքային տեսք , 6) իրի նորոգման ժամանակ կորուստները թույլատրելիի սահմաններում են, 7) գործողությունները կատարվում են անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջներին համապատասխան:
Գնահատման միջոցը	Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է գործնական առաջադրանքի կատարման հիման վրա: Ուսանողին հանձնարարվելու է կատարել տարբեր բարդության ոչ պակաս 5 տարբեր իրերի վերանորոգման աշխատանքներ: Արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասներն են.

	<ul style="list-style-type: none"> - Կատարված աշխատանքների արդյունավետության վերլուծությունը, - Նորոգված իրի և պատվիրատու պահանջների համապատասխանության վերլուծություն: <p>Արդյունքը բավարար է, եթե առաջադրանքը 90 տոկոսով ճիշտ է կատարվում:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական աշխատանքի միջոցով՝ արհեստանոցային պայմաններում:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ վերանորոգման ենթակա տարբեր տեխնոլոգիաներով պատրաստված իրեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>